https://doi.org/10.46991/hc.2022.17.1.039

Ֆելիքս Մովսիսյան
պ.գ.դ., պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՍՈՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հիմնաբառեր. Թանզիմաթ, բարեփոխումներ, արևմտահայ երիտասարդներ, կրթություն, լուսավորություն, առաջադիմություն, միություն, կազմակերպություն, սահմանադրություն, շարժում, մասոններ:

Արևմտահայության ազգային սահմանադրական շարժման ակունքներում կանգնած էին Եվրոպայում կրթություն ստացած պոլսահայ ու զմյուռնահայ երիտասարդ մտավորականները: Նրանց գաղափարական ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել XVIII դարի ֆրանսիական լուսավորության գաղափարները, 1848 թ. ֆրանսիական հեղափոխության հաղթանակը և հանրապետության հռչակումը: Այդ երիտասարդներից շատերը, տոգորված ազատ որմնադիրների ընկերությունների «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով, Թուրքիայում ձեռնամուխ եղան լուսավորության, առաջադիմության և հասարակական առաջընթացի գաղափարների տարածմանը: Եվրոպականացած արևմտահայ մտավորականները, որոնցից շատերը մասոնական օթյակների անդամներ էին, Թուրքիայում դարձան ազգային սահմանադրական շարժման նախաձեռնողները, գաղափարախոսները, կազմակերպիչներն ու գործիչները:

Feliqs Movsisyan
PhD, Professor, Head of the Chair of History of
Vanadzor State University after H. Tumanyan

WESTERN ARMENIAN MASONS AND NATIONAL CONSTITUTIONAL MOVEMENT

Keywords: Tanzimat, reforms, Western Armenian young people, education, enlightenment, progress, public organizations, constitution, movement, masons.

The origins of the Western Armenian national constitutional movement were young Armenian intellectuals from Constantinople and Smyrna who had received their education in Europe. Their ideological formation was greatly influenced by the ideas of the French Enlightenment of the 18th century, the victory of the French Revolution of 1848 and the

proclamation of the republic. Many of these young people, imbued with the motto of stonemasons "freedom, equality, fraternity", began to spread the ideas of enlightenment, progress and social development in Turkey. The Europeanized Western Armenian intelligentsia, many of whom were members of Masonic lodges, became the initiators, ideologists, organizers and activists of the national constitutional movement in Turkey.

Феликс Мовсисян
доктор исторических наук, профессор, заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна

ЗАПАДНОАРМЯНСКИЕ МАСОНЫ И НАЦИОНАЛЬНОЕ КОНСТИТУЦИОННОЕ ДВИЖЕНИЕ

Ключевые слова: Танзимат, реформы, западноармянская молодежь, образование, просвещение, прогресс, общественные организации, конституция, движение, масоны.

У истоков западноармянского национального конституционного движения стояли молодые армянские интеллектуалы из Константинополя и Смирны, получившие образование в Европе. На их идейное становление большое влияние оказали идеи французского Просвещения 18 века, победа Французской революции 1848 года и провозглашение республики. Многие из этих молодых людей, проникнувшись девизом вольных каменщиков (масонов) «свобода, равенство, братство», стали распространять в Турции идеи просвещения, прогресса и социального развития. Европеизированная западноармянская интеллигенция, многие из которых были членами масонских лож, стали инициаторами, идеологами, организаторами и активистами национального конституционного движения в Турции.

* * *

Ներածություն: Արևմտահայ երիտասարդության գաղափարական ձևավորման վրա լուրջ ազդեցություն թողեցին 1848 թ. եվրոպական հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարը, ազգային միավորման և սահմանադրական շարժումները: Արևմտահայությունը հատկապես 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանն է պարտական իր «կեանքի յառաջադիմական երևույթներից շատերին» (Աճառեան, 2001, 144): Եվրոպական մասոնական օթյակների նախաձեռնությամբ և դրանց անմիջական գլխավորությամբ (Baylot, 1968, 241-251; Вейл, 1906, с. 57, История XIX века, 1938, 349) հանուն առաջընթացի և ազգային միավորման համար այդ շարժումներն ընթացան XVIII դարի ֆրանսիական հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» մասոնական կարգախոսով (Пименова, 1992, 62, 72; Рубинский, 1976, 139): Այդ շարժումները դուրս եկան Եվրոպայի սահմաններից, հասան Բոսֆորի ափերը՝ բարերար ազդեցություն թողնելով օսմանյան տիրապետության տակ հեծող արևմտահայության շրջանում: Եվրոպական լուսավորության, առաջադիմության և քաղաքական բարեփոխումների ջատագովներն ու

գաղափարակիրները 1840-ական թթ. հատկապես Ֆրանսիայում ու Իտալիայում ուսանած, «իսկապես կրթված», ֆրանսիական հեղափոխության ազատամտական գաղափարներով տոգորված, մասոնության հետ առնչություններ ունեցած և «ազգային ոգով ներշնչված մարդիկ էին» (Ալպոյաճեան, 1964, 78): Նրանք, «գիտական, ազատական, հասարակական լեցուն պաշարով» (Ֆէնէրճեան, «Հայրենիք», 10.1954, 92) վերադառնալով հայրենի Կ. Պոլիս և Զմյուռնիա, իրենց նվիրեցին ազգային միասնության, համերաշխության ու եղբայրական փոխօգնության գործին: Այդ նպատակով արևմտահայ երիտասարդ մտավորականներն ու «եվրոպականացած» վաճառականները հիմնեցին ազգային, հասարակական, կրթական, բարեգործական տասնյակ միություններ և ընկերություններ, գաղտնի կազմակերպություններ, անդամագրվեցին մասոնական օթյակներին: Նրանք ժողովրդին «հոգածութեան և զոհողութեան հոգի կը ներշնչէին, և անոնց հովանաւորութիւնը իրենց աշխատութեանց միացնելով օգտակար հաստատութեանց նախաձեռնարկներ կը լլային» (Օրմանեան, 1961, 3880): Այդ երիտասարդ մտավորականները դարձան արևմտահայ ազգային սահմանադրական շարժման հիմնական նախաձեռնողները, կազմակերպիչները, գաղափարախոսներն ու գործիչները, ինչպես նաև մասոնության տարածման ջատագովները և ազատ որմնադիրների օթյակների հիմնադիրները:

Սահմանադրական շարժման սկզբնավորումը: Թուրքիայում արևմտահայերի սահմանադրական շարժումը սկիզբ առավ Թանզիմաթի առաջին փուլում: Դրանում որոշակի դեր խաղած կառավարության «ոչ մեծ լուսավոր խմբի ձգտումը՝ երկիրը կործանումից փրկելու համար բարեփոխումներ իրականացնելը»: Նրանք հասկանում էին, որ «պետությունը կորցնում է իր ուժը, երբ օրենքները չեն գործում» (Миллер, 194, 73): Բարեփոխումների մեծագույն ջատագովը «երիտասարդ թուրքերի ռահվիրա» (Թոփչեան, 1909, 232), բրիտանական խորհրդարանական կարգերի կողմնակից, արտաքին գործերի նախարար Մուստաֆա Ռեշիդ փաշան էր: Եվրոպայում կրթություն ստացած, Փարիզում մասոնական օթյակի անդամ դարձած Ռեշիդ փաշան համոզեց սուլթան Աբդուլ Մեջիդին 1839 թ. նոյեմբերի 9-ին Գյուլհանեի Հաթթը շերիֆ հրովարտակ հռչակել, որը Թանզիմաթի դարաշրջանի սկիզբ դրեց (Петросян, 1971, 41): Արևմտահայությունը խանդավառված էր Թանզիմաթի «հաւասարութեան, արդարութեան և բարեկարգութեան փրկարար սկզբունքները» հաստատելու խոստումից, որոնք «վարչային և ընկերային բարենորոգման հզոր մղում տուին» (Քեչեան 1888, 90): Բարենորոգումների ջատագովները պոլսահայ «լուսամիտ մեծահարուստ» ամիրաներ Հովհաննես Տատյանի, Կարապետ Պալյանի, Հովհաննես Աերվերյանի, Մկրտիչ Ճեզայիրլյանի և Պողոս Օտյանի հովանավորությամբ 1840-ական թթ. սկզբում Փարիզում կրթություն ստացած պոլսահայ աղքատ ընտանիքներից սերած ուսումնատենչ և ուշիմ 25-30 հայ ուսանողներն էին («Արշալույս Արարատյան», 6.02.1848): Նրանց թվում էին Գրիգոր Աղաթոնը, Նահապետ Ռուսինյանը, Հարություն Սվաճյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, Նիկողայոս Զորայանը, Առաքել, Հարություն, Գարեգին Տատյան եղբայրները, Հարություն և Նիկողոս Պալյան եղբայրները: 1840-ական թթ. երկրորդ կեսին Փարիզում կրթություն ստացան Անտոն և Սարգիս Պալյանները, Հովհաննես Վահանյանը, Միքայել և Թովմաս Խորասանճյանները, Գրիգոր Մոզյանը, Ճանիկ Արամյանը, Ստեփան Ոսկանյանը, Կարապետ Յութուճյանը, Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց), Հաբեթիկ Նեվրուզյանը՝ բոլորն էլ «ազդեցիկ մարդկանց զավակներ կամ խիստ

առաջադեմ ու ընդունակ պատանիներ» (Ալպոյաճեան 1910, 234): Նրանցից Ճանիկ Արամյանն ու Ստեփան Ոսկանյանը մասնակցեցին 1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխությանը: Այդ երիտասարդները, վերադառնալով Կ. Պոլիս, ձեռնամուխ եղան ազգի լուսավորական, գրական, գիտական, արհեստավորական առևտրական գործունեության զարգացմանը և ազգային ընկերությունների հիմնադրմանը:

1846 թ. մարտի 17-ին Բերայում մի խումբ կաթոլիկ ազգասեր հայեր, որոնք Մուրադյան ու Ռափայելյան վարժարանների շրջանավարտներ էին, հիմնեցին «Համազգեաց ընկերություն (Քյոմուրճեան 1931, 568)», որն «Արշալույս Արարատյան» թերթի բնութագրմամբ՝ «կը խոստանայ՝ ազգասիրութիւնը և ընկերասիրութիւնը միմիայն առաջնորդ ունենայ միշտ իր ամեն ընթացիցը («Արշալույս Արարատյան», 19.04.1846)»: Ընկերության հիմնադիրներ Մկրտիչ Սամանճյանը, Հակոբ Տավությանը, Ա. Լուֆթյանը, Խաչատուր Գազազյանը, Հովսեփ Վարդանյանը, Կարապետ Թյուլպենճյանը, Սարգիս Ասկերյանը և Սերովբե Ազնավուրյանը (Պէրպէրեան 1871, 350-351; Ալպոյաճեան 1910, 250) իրենց առաջնահերթ խնդիրը համարում էին գավառներում կրթություն տարածելը, «ազգին կրօնապես անջատեալ մասերը յարաբերութեան դնելը» (Ալպոյաճեան 1910, 250): Նրանք, միաժամանակ առաջնորդվելով մասոնական եղբայրության գաղափարներով, ձգտում էին հայ առաքելական ու կաթոլիկ եկեղեցիներին դավանողների միջև համերաշխություն, միասնություն և ազգասիրություն սերմանել: Սակայն բախվելով թուրքական իշխանությունների՝ քրիստոնյա ժողովուրդների իրավունքների և ազգային շահերի ոտնահարմանը՝ ավելի քան 600 անդամ («Արշալույս Արարատյան», 6.02.1846) ունեցող այս ընկերությունը 1852 թ. դադարեցրեց իր գործունեությունը («Մասիս», 09.1852, թիվ 33):

Այս ընկերության շնորհիվ 1840-ական թթ. Կ. Պոլսի «մթնոլորտը գերազանցապէս խանդավառիչ էր, հղի անգին գաղափարներով» (Ալպոյաճեան 1910, 235): Առաջադիմության և լուսավորության գաղափարներով տոգորված պոլսահայ երիտասարդ մտավորականները «խմորիչը եղան այն շաղախին որով պիտի պատրաստուեր ազգային զարգացման շէնքը և բուն իսկ Ազգային Սահմանադրությունը» (Ալպոյաճեան 1910, 250): Արևմտահայ սահմանադրական շարժման ակունքներում կանգնած էին Փարիզում կրթություն ստացած մի խումբ երիտասարդ կաթոլիկ հայեր: Նրանցից ապագա դիվանագետ Հակոբ Կրճիկյանը, ճարտարապետ Նիկողոս Պալյանը, բժիշկներ Նահապետ Ռուսինյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), հրապարակախոս Գրիգոր Օտյանը «նոր մտքերի և յառաջադէմ գաղափարների ռահվիրաներ հանդիսացան» (Սարուխան, 1912, 246): Նրանք քաղաքական փորձառության առաջին դասերը ստացել էին 1848 թ. ֆրանսիական հեղափոխության օրերին, ներկայացնում էին Փարիզի «այդ գաղափարական միութիւնը Կ. Պոլսոյ մէջ, կը վարեին ազգային գործոց մէջ ազատականներու փոքրիկ խմբակը, զգուշավորութեամբ ու խոհեմութեամբ» (Ալպոյաճեան 1910, 247-248):

Ֆրանսիական հեղափոխության ազդեցության տակ «ազատասեր եւ ազգասեր դարձած» (Մինաս Չերազ 1929, 71) Նահապետ Ռուսինյանը, Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց), Հովհաննես Վահանյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, Հովսեփ Պեյրանը Փարիզում ուսանելու ժամանակ՝ 1849 թ. ապրիլի 27-ին, հիմնեցին «Արարատյան ընկերություն»: Ֆրանսիական հեղափոխության և մասոնության գաղափարների ազդեցությամբ ընկերությունը քարոզում էր «ազգասիրութիւն և մարդասիրութիւն», կոչ էր անում բոլոր

«ազնիվ և ազգասեր սրտերին… հայ ազգին յառաջադիմութեանը և պիտոյիցը ծառայել, անոր կարօտութեանց մեկուն հասնիլ» («Արշալույս Արարատյան», 23.06.1850; «Հայաստանի կոչնակ», 1957, թիվ 11, 329):

Եվրոպական քաղաքական և մշակութային արժեքների ջատագով դարձած պոլսահայ երիտասարդները Փարիզում ուսանելու տարիներին բազմաթիվ շփումներ էին ունեցել եվրոպական ազատ որմնադիրների հետ, համալրել մասոնական օթյակների շարքերը: Նրանցից Հակոբ Կրճիկյանն ու վաճառական Միքայել Երամյանը 1840-ական թթ. սկզբում Փարիզում անդամագրվել էին ֆրանսիական «La Perseverante Armitie» («Հարատևող բարեկամություն») օթյակին («Հայրենիք», 02.1955, թիվ 2, 79; Պէյլէրեան, 2001, 151, 155; Jamgocyan, 2017, 64): «Արևելք» և «Արևմուտք» հանդեսների ապագա խմբագիր, 1848 թ. ֆրանսիական հեղափոխության օրերին առաջիններից մեկը զենքը ձեռքին թագավորական Թյուիլրի պալատը «մտնելու պատիվը ունեցած» («Արևմուտք», 1859, թիվ 17, 131) Ստեփան Ոսկանյանը իտալական «Liberta» («Ազատություն») օթյակի անդամ էր («Հայրենիք», 03.1937, թիվ 5, 82-83): Լոնդոնում անգլիական «Jordan» («Հորդանան») թիվ 201 օթյակին անդամագրվել էր փաստաբան Սերովբե Ազնավուրը, իսկ մի փոքր ուշ՝ «Ազդարար Բյուզանդյան» թերթի երիտասարդ խմբագիր, Թանզիմաթի ժամանակների փայլուն մտավորական Խաչատուր Ոսկանյանը: Նրանք միաժամանակ Մանչեսթրի «Odd Fellows» եղբայրական օթյակի անդամ էին («Հայրենիք», 03.1937, թիվ 5, 82-83; «Հայրենիք», 10.1954, թիվ 10, 93; Պէյլէրեան 2001, 151; Jamgocyan, 2017, էջ 48, 58, 60): Մանչեսթյան «Integrity» («Ուղղամտություն») թիվ 168 օթյակի անդամ էր երիտասարդ վաճառական Կոզմա Աղջիկյանը (Պէյլէրեան, 2001, 151):

Եվրոպայում մասոն ձեռնադրված Հակոբ Կրճիկյանը, որը մեծ եպարքոս, մասոն Ռեշիդ փաշայի թարգմանն էր, 1846 թ. նրան խնդրել էր ուշադրության կենտրոնում պահել հայ համայնքին հուզող խնդիրները, իսկ Կ. Պոլսի «պատրիարքարանի վարչութեանը օրինական և ժողովական ձև տալ» (Օրմանեան, 1961, 3812): Դրա անհրաժեշտությունը զգացվում էր հատկապես այն առումով, որ Մատթեոս պատրիարք Չուխաճյանը որոշել էր ազգային-եկեղեցական գործերը վարել Կ. Պոլսի «երեւելիներէն կազմուած ժողովի մը խորհրդակցութեամբը» («Արշալույս Արարատյան», 21.03.1847, թիվ 281) և դեռևս 1844 թ. հուլիս-օգոստոսին անձնական նախաձեռնությամբ այդպիսի մի ժողով էր հրավիրել, որն իշխանությունների կողմից հաստատված չէր: Մկրտիչ ամիրա Ճեզայիրլյանը և Հ. Կրճիկյանը դիմեցին Ռեշիդ փաշայի օգնությանը, վերջինս էլ սուլթան Աբդուլ Մեջիդի միջոցով կարգավորեց այդ խնդրանքը (Պէրպէրեան, 1871, 319; Քեչեան 1888, 12): 1846 թ. սուլթանի թույլտվությամբ Կ. Պոլսի հայությունը կազմեց 16 ամիրաներից և 14 արհեստավորներից կազմված ազգային ժողով: Նրանք փոխհամաձայնությամբ իրավունքի հավասարության հիման վրա համայնքային գործերի կառավարումը բաժանեցին միմյանց մեջ (Սարուխան, 1912, 242): Ռեշիդ փաշան քրիստոնյա համայնքների ղեկավարներին հայտնեց, որ նրանք՝ որպես նույն երկրում ծնված ու ապրող հպատակներ, պետք է օգտվեն հավասար իրավունքներից (Сафрастян, 1985, 29): 1846 թ. հունիսին սուլթանը բողոքական հայերին թույլատրեց Կ. Պոլսում ստեղծել իրենց եկեղեցին (Օրմանեան, 1961, 3805):

1847 թ. մայիսի 7-ին արտաքին գործերի նախարար Ալի փաշան Մատթեոս պատրիարքին և հայ ամիրաներին ներկայացրեց սուլթանի հրովարտակը՝ հայ համայնքի

ազգային կանոնադրությունը հաստատելու մասին: Դրանով հայոց պատրիարքարանի ներսում թույլատրվում էր ստեղծել 14 հոգևորականներից և 20 աշխարհականներից կազմված Հոգևոր և Գերագույն խորհուրդներ, որտեղ նախագահելու էր պատրիարքը: Ազգային գործերը տնօրինելու էր Գերագույն ժողովը, իսկ Հոգևոր ժողովը զբաղվելու էր գավառներում եկեղեցական գործերով և պատրարքի միջոցով դրանք ներկայացներ Գերագույն ժողովին (Օրմանեան, 1961, 3812-13813): Հոգևոր և Գերագույն ժողովների ընտրությամբ «վերջ կը տրուէր Պատրիարքական միապետութեան, միանգամայն կը ջնջուէր Ազնուապետութեան ազդեցութիւն, վասնզի Ամիրաներու Պատրիարքարանին գործերը վարելու առանձնաշնորհը կը ջնջուէր, և Ամիրա ու ժողովուրդ կը հաւասարէին իրարու միեւնոյն իրաւամբ և պատասխանատութեամբ ազգային գործերը վարելու կոչուելով» (Ալպոյաճեան, 1910, 324):

1847 թ. մայիսի 9-ին Մատթեոս պատրիարքի հրավիրած Ընդհանուր ժողովը ընտրեց 20 աշխարհականներից կազմված Գերագույն ժողով, որի անդամ դարձան Օսմանյան կայսրության հայտնի վառոդապետեր Հովհաննես և Պողոս Տատյանները, պետական պաշտոնյա Հ. Կրճիկյանը, սեղանավորներ Միքայել Փիշմիշյանը, Մաքսուտ Սարիմյանը, Գևորգ Երամյանը, Մկրտիչ Ճեզայիրլյանը, Միսաք Միսաքյանը, ճարտարապետեր Կարապետ Պալյանը, Հովհաննես Սերվերյանը (Ալպոյաճեան, 1910, 310-311; Պէրպէրեան, 1871, 319-321; Ասատուր, 2011, 190-191): Գերագույն ժողովի ատենապետությունը և ատենադպրությունը վարելու էր Հակոբ Կրճիկյանը, որին շնորհվեց լոգոֆետի տիտղոս: Ընտրությունների արդյունքները Բարձր դուռը հաստատեց, որից հետո՝ 1847 թ. մայիսի 20-ին, Գերագույն ժողովը գումարեց իր առաջին նիստը (Ալպոյաճեան, 1910, 313; Թոփչեան, 1909, 235):

Նոր կանոնադրությամբ վարչական գործերը կանոնավոր ընթացք ստացան, որը, Մ. Օրմանյանի կարծիքով, դարձավ «ազգային սահմանադրութեան տիրապէս սկզբնաւորութիւնը: Զի ինչ որ ասկէ ետքը կատարուեցաւ, 1860-ի կազմակերպութիւնը եւ 1863-ի հաստատութիւնը, այդ առաջին կազմութեան լրումն եւ ամբողջացումն են եղած» (Օրմանեան, 1961, 3814): Հոգևոր և Գերագույն ժողովների ձևավորումը «ներկայացուցչական սկզբունքի առաջին կիրառումն էր, որ յետոյ ծնունդ տուեց ազգային սահմանադրութեան» (Թոփչեան, 1909, 235): Դրանք գործեցին 1847 թ. մինչև 1860 թ. մայիսի 24-ը՝ երկու տարին մեկ անցկացնելով ընտրություններ: Ժողովների գործունեությունը միանգամայն նոր երևույթ էր արևմտահայության կյանքում և որոշակի ժողովրդավարության սաղմերի դրսևորում: Դա եվրոպականացած արևմտահայ երիտասարդ մտավորականների առաջին հաջողությունն էր: Դրանում մեծ դեր խաղաց 1848 թ. ֆրանսիական «հեղափոխութեան ոգիով սնած և դաստիարակուած հայ մտաւորականութեան ընտրեալ դասը, որ սովորաբար կը կոչուի Սահմանադրութեան հեղինակներ, հիմնադիրներ» (Ատոմ, 1914, 43): 1848 թ. իտալական ազգային պայքարի ձեռքբերումները և ֆրանսիական հեղափոխության հաղթանակը, որոնց ղեկավարներից շատերը մասոն էին (Ридли Дж. Фримасоны, 2007, 252-265; Соловьев, 1992, 76), ինչպես նաև սուլթանական բռնապետության դեմ հարավսլավոնական ժողովուրդների, հույների, մոլդովացիների ու վալախների պայքարը որոշակի հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում: Նրանց տարբերային, պատահական բնույթ կրող շարժումները դարձան «ստրկական քնից ու քարացած անտարբերութիւնից» արթնացման

«պերճախոս արտահայտութիւն» (Թոփչեան, 1909, 236): Այդ պայքարի անմիջական տպավորության տակ 1848 թ. հեղափոխության զավակներ Հ. Կրճիկյանը, Մկրտիչ և Գրիգոր Աղաթոն եղբայրները, Սերվիչենը և մյուսները գործի անցան «1848ի փրկարար գաղափարները ազգային գործոց մէջ կիրարկելու հաստատ մտադրութեամբ» (Ալպոյաճեան, 1910, 427): Եվրոպական կրթություն ստացած այդ առաջադեմ երիտասարդ մտավորականներ մտորում էին, թե ինչպե՞ս ժողովրդին մասնակից դարձնեն ազգային և վարչական գործերին: Նահապետ Ռուսինյանի վկայությամբ նրանցից Նիկողոս Պալյանը դեռևս 1844-1845 թթ. «մտորում էր ազգի վիճակի մասին, տենչում էր ժողովրդական ներկայացուցչութիւն կազմել» (Ատենագրութիւն ազգային ժողովոյ, 1865):

Ն. Պալյանի գաղափարական համախոհներ Ն. Ռուսինյանը, Սերվիչենը, Գ. Օտյանը 1848 թ. կազմեցին հայ համայնքի կանոնադրություն, որը կրում էր ֆրանսիական հեղափոխության ազատամտական գաղափարների դրոշմը և սահմանադրության ազդեցությունը: Օգոստոսի 26-ին կանոնադրությունը ներկայացվեց Մատթեոս պատրիարք Չուխաջյանի հաստատմանը, որը «միանգամայն փառասէր էր և նախանձոտ ընդ փառս այլոց, և հաստատ յառաջադիմութիւն մտաց իւրոց, զոր ոչ կամէր փոխել, թէեւ լիներ ինքեան այն վնաս մէծ» (Պէրպէրեան, 1871, 281): Կանոնադրությունը չէր բավարարում ոչ միայն ինքնահավան, «առանց բաւականաչափ կարողութիւն եւ դատողութիւն» (Օրմանեան, 1861, 3877) ունեցող Մատթեոս պատրիարք Չուխաճյանին, այլև Կ. Պոլսի ամիրաներին: Նրանք դժգոհ էին, որ պատրիարքը «իրենց հլու գործիք չէր ըլլար» (Ասատուր, 2011, 196): Մկրտիչ ամիրա Ճեզայիրլյանը մեծ եպարքոս Ռեշիդ փաշայի մոտ պատրիարքին ամբաստանեց «իբր պետութեան հրամանով հաստատուած ժողովը չսեպող եւ իւրովի գործող» (Օրմանեան, 1861, 3877): Ռեշիդ փաշայի հանձնարարությամբ Գերագույն ժողովի լոգոֆետ Հակոբ Կրճիկյանը պահանջեց պատրիարքի հրաժարականը: 1848 թ. հոկտեմբերի 1-ին նա հրաժարական տվեց (Պէրպէրեան, 1871, 361; Ալպոյաճեան, 1910, 325):

1849 թ. օգոստոսին Գերագույն ժողովի անդամներ ընտրվեցին հիմնականում նախորդ ժողովի աչքի ընկնող դեմքեր՝ թե՛ պետական պաշտոնյաները և թե՛ ճանաչված ու ազդեցիկ սեղանավորները: 1851 թ. հոկտեմբերի 31-ին Գերագույն ժողովի կազմը որոշակիորեն փոխվեց: Ժողովականներ դարձան Հ. Կրճիկյանը, Պ. Տատյանը, Հ. Սերվերյանը, Պետրոս Խորասանճյանը, Նշան Փիշմիշյանը, Նիկողոս Միսաքյանը, Կարապետ Թոքատլյանը, Հակոբ Նորատունկյանը, Մարտիրոս Հովյանը, Գրիգոր Վիչենյանը և ուրիշներ (Ալպոյաճեան, 1910, 315): 1853 թ. մայիսի 14-ի Գերագույն ժողովի կազմում ընտրվեցին Հովհաննես և Պողոս Տատյանները, Կարապետ Պալյանը, Գևորգ Երամյանը, Մաքսուտ Սարիմյանը, Սահակ Ապրոյանը, Գևորգ Պարտիզպանյանը, Եաղուպ Եաղուպյանը, Հակոբ Պեշիկթալշյանը և ուրիշներ (Ալպոյաճեան, 1910, 316-317): 1853 թ. հոկտեմբերի 22-ին Գերագույն ժողովը կազմեց «Ուսումնական խորհուրդ», որին անդամագրվեցին 1848 թ. եվրոպական հեղափոխական, ազգային-ազատագրական և մասոնական գաղափարներով տոգորված ու հայության ճակատագրով մտահոգված երիտասարդ մտավորականներ՝ բժիշկներ Նահապետ Ռուսինյանը, Սերովբե Վիչենյանը, դիվանագետ Հակոբ Կրճիկյանը, ճարտարապետ Նիկողոս Պալյանը, լեզվագետներ Աբրահամ Երամյանը, Հարություն Հովույանը, Սարիմ Մաքսուտյանը, Կարապետ Ութուճյանը, Գրիգոր Օտյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, հողագետ Հակոբ Ամասյանը,

տարրագետ Հովհաննես Վահանյանը, Առաքել, Հարություն և Սիմոն Տատյանները: Խորհրդի ատենապետ ընտրվեց Սերովբե Վիչենյանը (Սերվիչենը) (Զարդարեան, 1933, 15; Ասատուր, 2011, 206, Սարուխան, 1912, 11):

«Ուսումնական խորհրդի» անդամներ Ն. Պալյանը, Սերվիչենը, Ն. Ռուսինյանը և Գ. Օտյանը ձեռնամուխ եղան ազգային առաջին կանոնադրության մշակմանը («Հանդես ամսօրյա», 07.07.1902, 206): 1854 թ. հունիսին Գերագույն ժողովը ստեղծեց 9 հոգևորականներից և 14 աշխարհականներից կազմված մի մարմին, որին «առաջին անգամ «Սահմանադրական յանձնաժողով» անունը տալով նրան՝ յանձնարարեց կազմել մի նոր «Ազգային կանոնադրութիւն» փոխուած՝ ըստ պահանջման նոր հանգամանքների» (Սարուխան, 1912, 15): Ազգային կանոնադրության ստեղծման ուղղությամբ հիմնական աշխատանքը կատարեցին «Ուսումնական խորհրդի» անդամներ Ն. Պալյանը, Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Գրիգոր և Մկրտիչ Աղաթոնները, Կարապետ Յութուճյանը, Գալուստ Կոստանդյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, Սահակ Ապրոյանը և ուրիշներ: Նրանք ամիսներ շարունակ «անխոնջ աշխատեցան և վերջապես Սահմանադրութիւնը լմնցուցին» («Մեղու», 31.12. 1856, 173): Անուրանալի է «Ուսումնական խորհրդի» անդամների դերը արևմտահայ մտավոր շարժման մեջ, քանզի իրենց գործունեության սկզբից ևեթ առաջ տարան ազգային ուժերի համախմբման գործը: Արփիար Արփիարյանի բնութագրմամբ՝ «Անոնցմէ ոմանք այնտեղ Բարիզին մէջ կռուած 48 թ. յեղափոխականներուն հետ և հետերնին Բոսֆորի ստրուկ ափունքը տարածած էին Բարիզի փողոցի ոգին: Գաղափարներու հեղաշրջողներ ու պայքարողներ եղան, կործանեցին կես ավատական բարքերը, որ դեռ կտիրեին հայոց մեջ: Ջնջուեցին ամիրաներու ջոջերուն ու եկեղեցական տիրապետութիւնը և հիմնուեցին հայկական սահմանադրութիւնը իրենց Ֆրանսա սորված սկզբունքներուն համեմատ, ժողովրդին տվին նշանակութիւն և ուժեր, գիտակցութիւն ու Ազգային ժողով» («Նոր կեանք», 1899, թիվ 1, 181):

«Ուսումնական խորհրդի» անդամների մշակած սահմանադրության նախագիծն արժանացավ Գերագույն ժողովի հավանությանը: Որոշվեց այն Ազգային ընդհանուր ժողովի վավերացումից հետո գործողության մեջ դնել, սակայն տարաձայնությունների պատճառով «անկարելի բան մը եղաւ»: Նորընտիր ժողովը հանձնաժողովի կազմը համալրեց 2 հոգևորականով և 5 աշխարհական գործիչներով, որը պետք է վերջնական տեսքի բերեր սահմանադրությունը («Մեղու», 31.12.1856, 174-17): 1854 թ. օգոստոսի 26-ին «Ուսումնական խորհրդի» անդամները նախօրոք մտահղացած կանոնադրության տեքստ ներկայացրին Հակոբոս պատրիարք Սերոբյանի հաստատմանը: Այն կազմված էր 1848 թ. եվրոպական հեղափոխությունների արդյունքում ընդունված սահմանադրությունների սկզբունքով, որի հիմքում ընկած էր ֆրանսիական սահմանադրությունը: Այդ նախագիծը երկու տարի ընթացք չստացավ:

Ղրիմի պատերազմից հետո՝ 1856 թ. մարտի 30-ին, Փարիզում կնքված հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածում ամրագրված «Թուրքիան եվրոպականացնելու» Անգլիայի և Ֆրանսիայի պահանջը (Փափազեան, 2002, 27-35; Թումանեան, 1906, 613) սուլթանին հարկադրեց բարեփոխումների նոր հրովարտակ հռչակել, որի հեղինակը Եվրոպայում մասոնությանն անդամագրված մեծ եպարքոս Մեհմեդ Ալի փաշան էր: Արևմտահայ մտավորականությունը ոգևորված էր նոր հրովարտակով, որի «մեծադղորդ խոստումները

վարդագոյն հեռանկարներ էին բացում և վառվռուն հոյսեր էին ներշնչում» (Թոփչեան, 1909, 240): Բարձր դուռը, ի թիվս այլ քայլերի, կայսրության հպատակ ոչ մահմեդական ժողովուրդներից հայերին, հույներին ու հրեաներին հրահանգեց կազմել համայնքային գործերի կառավարման վերաբերյալ կանոնադրություններ և ներկայացնել սուլթանի հաստատմանը: Բարեփոխումների կողմնակից առաջադեմ թուրք գործիչները գտնում էին կամ գոնե ձևացնում էին, թե «սահմանադրական օրէնքը կամ ներկայացուցչական ըէժիմը յանկարծ կարող էր բարեփոխել Թիւրքիայի այն բոլոր հիմնական թերութիւնները, որոնց վրայ մատնացոյց էին լինում թէ եվրոպացիք և թէ օսմանեան հպատակ քրիստոնեաները» (Սարուխան, 1912, 104): Ոչ մահմեդական համայնքներին ազգային կանոնադրություններ շնորհելը Բարձր դռան համար արտաքին միջամտության և Թուրքիային մասնատումը «կանխող միակ փրկարար միջոցն էր»: Ըստ երիտասարդ թուրքերի պարագլուխներից մեկի հայտարարության՝ «միմիայն սահմանադրական ըէժիմը կարող է փրկել եւ զօրացնել Թուրքիան» (Սարուխան, 1912, 104): Ելնելով այս մտայնությունից՝ Բարձր դուռը Թանզիմաթ հռչակեց, որի խոստումներից ու սպասվող հեռանկարից ամենից վաղ օգտվեցին պոլսահայ երիտասարդ մտավորականները: Նրանք «մինչ այդ մտել էին սահմանադրական վարչութեան ճանապարհը իրանց ներքին ազգային, հասարակական և կրոնական գործերի կարգաւորման համար, թէև սահմանադրութիւն բառը դեռ չէր գործածուել» (Սարուխան, 1912, 15):

1856 թ. Կ. Պոլսում ստեղծվեց 21 հոգուց բաղկացած սահմանադրական նոր հանձնաժողով, որի աշխարհիկ դեմքերը «Ուսումնական խորհրդի» անդամներն էին: Նրանք Գերագույն ժողովի նոր լոգոֆեթ Գրիգոր Մարկոսյանի ղեկավարությամբ դեկտեմբերին ավարտեցին իրենց աշխատանքները («Մեղու», 31.12.1856, 73-175): Նրանց «կազմած ծրագիրը շատ ազատամիտ» համարեցին Տատյան և Երեմյան ամիրաները և նրանց համախոհ խմբակը» (Օրմանեան, 1861, 4016), ուստի Գ. Մարկոսյանը որոշեց «միջասահման նոր ծրագիր պատրաստել առանց շատ մանրամասնութեանց մտնելու» (Քէչեան, 1888, 94): Սահմանադրական հանձնաժողովը 1857 թ. մարտի 22-ին հրապարակեց հայ համայնքի ներքին գործերի տնօրինությունից շատ հեռու գնացող կանոնադրություն («Մասիս», 28.03.1857), որը կրում էր «սահմանադրության» անունը, թեև բուն իմաստով կանոնադրությունից չէր տարբերվում: Սակայն «լրագրական լեզուի և պաշտօնական կիրառութեան մէջ սկսած էր իբր եվրոպական քօնսթիթիւսիօն (Constitution) բառին համանշանակ գործածուիլ» (Քէչեան, 1888, 138): Ժողովականները Գ. Մարկոսյանի ներկայացրած սահմանադրության նախագծին հավանություն տվեցին «խնդութեամբ եւ զոհութեամբ եւ օրհնութեամբ» և ստորագրեցին դրա տեքստի տակ: Սահմանադրության այս տարբերակը «լույս տեսնելու բախտը չունեցավ» (Քէչեան, 1888, 95):

Մասոնության տարածումը և սահմանադրական շարժումը: 1850-ական թթ. երկրորդ կեսին «Թուրքիան եվրոպականացնելու» նպատակով անգլիացիներն ու ֆրանսիացիները, ելնելով բացառապես իրենց տնտեսական և քաղաքական շահերից ու նկատառումներից, այստեղ տարածեցին իրենց բարքերն ու սովորությունները և ազատ որմնադիրների ընկերային ու եղբայրասիրական գաղափարները: Նրանց ջանքերի շնորհիվ Կ. Պոլսում ու Զմյուռնիայում «մասոնական օթեակները սկսան սունկի նման բուսնիլ» (Պէյլէրեան, 2003, 150): 1856 թ. նոյեմբերի 25-ին Կ. Պոլսում մի խումբ անգլիացի ծովայինների հիմնած

«Արևելյան» (Oriental) թիվ 687 օթյակին անդամագրվեցին կաթոլիկ հայեր՝ իրավաբան Սերովբե Ազնավուրը, երիտասարդ վաճառական Կոզմա Աղջիկյանը, իսկ հետագայում՝ ևս 15 պոլսահայեր, մասնավորապես՝ վաճառականներ Գրիգոր Մանասը, Միքայել Ալիշանը, հրապարակախոս Սերովբե Թագվորյանը, բանաստեղծ Սրապիոն Հեքիմյանը, բանկի տնօրեն Պերճ Քերեսթեճյանը, թարգմանիչ Թադեոս Թերխանը (Ֆէնէրճեան, 1935, 22; Պէյլէրեան, 2003, 151-152; Jamgocyan, 2017, 60):

1857 թ. սեպտեմբերի 1-ին Կ. Պոլսում հիմնվեց «Բոսֆորի աստղ» («L, Etoile du Busphore») ֆրանսախոս օթյակ, որին անդամագրվեցին գործարար Հովհաննես Արշակունին, օսմանյան բանակի սպա Միհրան Մարաշլյանը և ուրիշներ (Ֆէնէրճեան, 1936, 298; Jamgocyan, 2017, 77-78):

1859 թ. հունվարի 7-ին Կ. Պոլսում, «Համազգային ընկերությանը» պատկանող տանը մի խումբ կաթոլիկ հայեր մասոնական օթյակների հավաքույթների նմանությամբ հիմնեցին «Մուրադյան և Ռափայելյան աշակերտաց ընկերություն»: Այս «ազնիվ միության» նպատակն էր արևմտահայությանը «քաղաքական կենդանություն» տալ, «անցեալէն ինչ որ բարի է, պահպանել ու ապագային պատրաստել» (Պօղոսեան հ. Եփրեմ վ., 1967, 65): Ընկերության անդամներ, սահմանադրական շարժման ակտիվ գործիչ Հովսեփ Վարդանյանը, բանաստեղծներ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Սրապիոն Հեքիմյանը, Թովմաս Թերզյանը, իրավաբան Տիգրան Յուսուֆյանը շուտով անդամագրվեցին եվրոպական մասոնական օթյակներին:

1859 թ. նոյեմբերի 19-ին Զմյուռնիայում հիմնված «Հոմեր» թիվ 806 անգլախոս օթյակի անդամ դարձան Սերովբե Ազնավուրը, Միքայել Երամյանը, «Վասպուրական» թատրոնի հիմնադիրներից դրամատուրգ և բանասեր Սարգիս Միրզա Վանանդեցին («Կեանք և արուեստ», 1935, 78; Ֆէնէրճեան 1936, 77-78; Պէյլէրեան, 2003, 151, 154):

Կ. Պոլսում և Զմյուռնիայում եվրոպական մասոնական օթյակների հիմնադրմանն ու բուռն գործունեությանը հաջորդեց Բարձր դռան կողմից հայ, հույն և հրեա համայնքներին գրեթե միաժամանակ ազգային կանոնադրություններ շնորհելը:

1860 թ. սահմանադրությունը: 1860 թ. սահմանադրությունը «ծրագրող և գործադրող» «Ուսումնական խորհրդի» անդամները Հրանտ Ասատուրի բնութագրմամբ «վեհոգի յեղափոխականներն» էին, XVIII դարի ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչներից մասոն կոմս «Միրաբոյի[1] թոռները: Նոքա կը պաշտէին ազատություն, …հաւասարութիւն, …եղբայրութիւն, որ անքակ կերպով կը միացունէ մարդերն, որպէս ազգերն»: Ահա այսպես ֆրանսիական հեղափոխության «նշանաբանովն բարձրացավ» հայոց ազգային սահմանադրությունը (Ասատուր, 1879, 15):

«Ուսումնական խորհրդի» անդամների հեղինակած Սահմանադրությունը կազմված էր «ժողովրդական ոգով եւ առաջադիմական ձգտումներով» (Ալպոյաճեան, 1910, 331; Սարուխան, 1912, 15), ուստի անցանկալի էր ամիրաների ու բարձրաստիճան հոգևորականության համար: Հայ ամիրաները «այդ կանոնադրութիւնը անյարմար կտեսնեին, Ազգին կրօնքի և ազգային ավանդութեանց հակառակ բաներ անոր մեջ տեսնել

[1] Կոմս Միրաբոն ֆրանսիական «Ինը քույրեր» մասոնական օթյակի անդամ էր (Ридли, 2007, 156; Тальмер, 03.1906, том 302, 240; Черняк, 1981, № 12, 115):

կը կարծեն…» («Հանդէս ամսօրեայ», 07.07.1902, 207): Սահմանադրության նախագիծը Բարձր դուռը մերժեց «այն դիտաւորութեամբ, թէ պետութեան մէջ պետութիւն չի կրնար լինիլ» (Քէչեան, 1888, 95):

1858 թ. երկրորդ կեսին աշխատեց կանոնադրության մշակման նոր հանձնաժողով, որի կազմած նախագծի քննարկումը հետաձգվեց, քանի որ «շատ ազատամիտ կնկատուեր Տատենաց, Երամեանց եւ ասոնց համախոհ ամիրայական խմբակէն» (Օրմանեան, 1861, 4016): 1859 թ. մայիսին ընտրված հանձնաժողովի մեջ մտան 5 եկեղեցական և 14 աշխարհիկ գործիչներ: Վերջիններիս թվում էին մասոնության գաղափարակիրներ Նահապետ Ռուսինյանը, Կարապետ Յութուճյանը, Բարունակ Ֆերուհիխանը, Գրիգոր Օտյանը, Մկրտիչ Աղաթոնը (Ազգային սահմանադրութիւն հայոց 1860, 46), որոնք հանձնաժողովի առավել բեղմնավոր աշխատած անդամներն էին: Այս անգամ հանձնաժողովի կազմում չընդգրկվեցին «Ազգային Սահմանադրութեան հիմնադիրներէն» (Մինաս Չերազ, 1929, 42) Սերվիչենը և Ստեփան Ասլանյանը, չնայած «անոնք ալ յայս մեծ գործ վաստակեցան» (Պէրպէրեան, 1871, 389): Աշխարհիկ խմբի ղեկավարը Ն. Ռուսինյանն էր, որը, առաջնորդվելով 1857 թ. կանոնադրությամբ («Հանդէս ամսօրեայ», 07.07.1902, 208), գրեթե միայնակ շարադրեց և խմբագրեց այդ փաստաթուղթը, «ուր մի ամբողջ խորհրդարանական լեզու մը ստեղծեց» (Մինաս Չերազ,1929, 69):

1859 թ. նոյեմբերին հանձնաժողովը վերամշակած կանոնադրության տեքստը ներկայացրեց Ազգային ժողովի քննարկմանը («Մասիս», 24.12.1859), որի ժամանակ ամիրայական խմբավորման հետ համագործակցած Գևորգ պատրիարք Քերեստեճյանը ջանում էր սահմանադրության նախագիծը «անվաւեր ու ապարդիւն ձգել» (Փափազեան, 1862, 190): Նա արգելքներ էր հարուցում և «գաղտնապես աշխատում էր, եթե կարելի է, իսպառ ջնջել նոր կանոնադրութիւնը» (Սարուխան, 1912, 16), որը սահմանափակում էր իր իրավունքները (Պալասանեան, 1890, 471): Պատրիարքն առաջարկում էր նորանոր փոփոխություններ, որոնք հավանության չարժանացան («Մասիս», 31.12.1859):

Սահմանադրականները «պատուական հայ» (Մինաս Չերազ, 1929, 48) Սերվիչենի գլխավորությամբ պատրիարքի դեմ պայքար սկսեցին: 1860 թ. ապրիլի 21-ին նա հրաժարական տվեց («Մասիս», 24.03.1860; Պէրպէրեան, 1871, 621), որի պատճառը հայտարարվեց խմբագրված «սահմանադրութիւնը անվաւեր և ապարդիւն ձգելը» (Փափազեան, 1862, 190): Նոր պատրիարք Սարգիս Գույումճյանի գլխավորությամբ Ազգային ժողովը 1860 թ. մայիսի 24-ին միաձայն ընդունեց հայ համայնքի՝ Գ. Օտյանի ու Սերվիչենի խմբագրած կանոնադրությունը (Պէրպէրեան, 1871, 427; Քէչեան, 1888, 138, Փափազեան, 1862, 190-191, Թոփչեան 1909, 241): «Ազգային սահմանադրութեան ամենից եռանդուն գործիչ» (Սարուխան, 1912, 247) Նահապետ Ռուսինյանի առաջարկությամբ հայ համայնքի կանոնադրությունը «մկրտվեց Ազգային սահմանադրություն փառաւոր տիտղոսով» («Մասիս», 26.05.1860): «Մասիս» թերթը սահմանադրության հաստատման օրը՝ մայիսի 24-ը, անվանեց «Հայկական Տարեգրութեանց մեջ ոսկեղեն տառերով նշանակուելու արժանի օր մը» («Մասիս», 26.05.1860): Սահմանադրությունն իրենց ստորագրությամբ վավերացրին սահմանադրական ժողովի անդամ 5 հոգևոր և 14 աշխարհիկ գործիչներ, որոնց թվում՝ սահմանադրական շարժման նվիրյալները՝ Ն. Ռուսինյանը, Մ. Աղաթոնը, Կ. Յութուճյանը, Մ. Մինասյանը, Գ. Օտյանը, Բ. Քրթիկյանը և ուրիշներ (Ազգային

սահմանադրութիւն հայոց, 1860): Ազգային սահմանադրության ստորագրված բնօրինակն իր մոտ պահում էր «Մասիս» թերթի խմբագիր Կարապետ Յութուճյանը («Հանդէս ամսօրեայ», 07.07.1902, 209):

Սահմանադրության մտահղացման գործում Ն. Ռուսինյանը չափազանց կարևորում էր Նիկողոս Պալյանի դերը, որի նկատմամբ «պաշտում մը ուներ» (Մինաս Չերազ,1929, 71): Ըստ նրա՝ Ն. Պալյանը «յղացաւ» սահմանադրության գաղափարը, «իւր ձեռօք գծագրեց ազգային կանոնադրութեան հիմնական սկզբանց այն հոյակապ յատակագիծը, որ… ետքը խմբագրաց գրչին տակ ձեւերու վայելուչ փոփոխութիւն կրած է: Ազգը ասոր կը պարտի իր սահմանադրութեան գոյութիւնը» (Սարուխան, 1912, 245): 1874 թ. հոկտեմբերի 18-ին՝ ազգային ժողովում ունեցած ելույթի ժամանակ, Ն. Ռուսինյանն դարձյալ վկայում է, որ «Սահմանադրութեան սկիզբը անուն մը կայ համէստորեն պահվտած - Նիկողոս Պալեան» (Սարուխան, 1912, 245):

Ազգային սահմանադրությունը Կ. Պոլսի և Թուրքիայի ողջ հայության կրթական, լուսավորական ու մշակութային կյանքը իրավականորեն կարգավորող փաստաթուղթ էր, որի հինգ գլուխներում ներկայացված էին կենտրոնական և գավառային վարչությունները, ընդհանուր, կրոնական ու քաղաքական ժողովները, ուսումնական, տնտեսական, ֆինանսական, դատական խորհուրդները, ժողովրդական ներկայացուցիչների տեղական՝ թաղերի ու թեմական ժողովները, ընտրական կարգը, պատրիարքի, ազգային ժողովի ընտրության պայմանները, ժողովների ու խորհուրդների կանոնադրությունները, անգամ սահմանադրության վերաքննությունը կարգավորող ազգային խորհուրդների գործունեության սահմանումը (Ազգային սահմանադրութիւն հայոց, 1860, 6-7): Ազգային սահմանադրության կարևորագույն մասը հիմնական սկզբունքներն էին, որոնցում (6 հոդվածում) շարադրված էին ազգի, անհատի և ազգային վարչության պարտավորությունները, որոնք հռչակվեցին «անփոփոխելի, այսինքն անոնց վերաքննութիւն ալ անընդունելի հռչակուեցան» (Փափազեան, 1862, 192):

Սահմանադրությունը հեշտությամբ չտրվեց արևմտահայությանը, որը տարիների համառ պայքարի արդյունքում «տասն անգամ տակնուվրայ եղաւ այս բանիս համար» («Մեղու», 1860, թիվ 86, 11): Սահմանադրության ընդունումը մեծ ոգևորություն առաջ բերեց Կ. Պոլսի մտավորականության և գավառների հայության լայն խավերի շրջանում, թեպետ թուրքական իշխանությունները մտադիր չէին այն հաստատել: Սահմանադրությունը ողջունում էին ազատամիտ Հարություն Սվաճյանի «Մեղու», Կարապետ Փանոսյանի «Մյունատի», Սարգիս Վանանդեցու «Միություն», Գրիգոր Չիլինկիրյանի «Ծաղիկ», Մանուել Յութուճյանի «Կիլիկիա», Մկրտիչ Խրիմյանի՝«Արծուի Վասպուրական» և այլ պարբերականներ:

Մատթեոս Մամուրյանը, նշելով, որ սահմանադրությունը մշակվել է ազգի ցավերը դարմանելու համար, ազդարարում էր. «Հայ ժողովուրդ, ձեր փափաքը և փորձը քանի քանի անգամ ապարդիւն մնալեն ետև, վերջապես յաջողեցաւ» («Միություն», 30.06.1860, 97): Արմենակ Հայկունու կարծիքով «հիմարություն է ենթադրել և կամ խորհիլ թէ Օսմանեան Կայսրութիւնը Հայոց Ազգին Սահմանադրութիւն շնորհել չուզեր…, անսահմանադրական հպատակ ազգ մը բեռ է նորա, որոյ որոյ ինքն հպատակ է» («Ծաղիկ», 10.06.1862, 290-291): Սիմոն Ֆելեկյանը, ողջունելով սահմանադրության ընդունումը, «Միություն»

բանաստեղծությունում մասոնական գաղափարախոսությամբ գրում էր. «Սուրբ արշալոյս-Սահմանադրութեան, Ազգին տայ սէր եւ միութիւն, Կեանք ու զօրութիւն» («Հայրենիք», 03.1937,թիվ 5, 79):

Սահմանադրության հետ մեծ հույսեր կապող մասոն Հ. Սվաճյանը գրում էր, որ սահմանադրության ընդունմամբ «շատերը հափշտակուած են, վասնզի ան կճանչնանք նիայն ազգի մը քաղաքակրթութեան անշեղելի ճանապարհը» («Մեղու», 30.05.1860): Նա արևմտահայությանը հորդորում էր. «Միանանք ազգայնութեան փառաւոր դրոշակին տակ. Սահմանադրութիւնը ամբողջ ազգն է»: Սահմանադրությանը տված գնահատականում Հ. Սվաճյանը բավական հեռու է գնում՝ ընդգծելով, որ նրա նշանակությունը դուրս է արևմտահայության սահմաններից: Նա ոգևորված գրում էր. «Աշխարհ թող զարմանա, երբ օր մը տեսնէ, թե ի՛նչ մեծ գործ մը, ի՛նչ մեծ դիւրութեամբ ի գլուխ ելած է…,եւ դուք ... աղքատ եւ հարստահարյալք՝ ցնծացեք եւ ուրախ եղեք... Ծափ զարկեք ու օրհնեցեք ազգին բարերարները» («Մեղու», 30.08.1860, 189):

Գրիգոր Չիլինկիրյանը նույնպես ոգևորված էր սահմանադրության ընդունումից, քանզի «Չկայ ճշմարիտ ազգասէր մը, չկայ ազատամիտ մը որ չհրճուի, ծափ չզարնէ մեռելատիպ Ազգի մը (հայոց) կեանք տուող այս հիմնադրութեան (սահմանադրութեան) վրայ («Ծաղիկ», 1861, թիվ 2)»:

Իրականում «ծափ զարկելու» և ուրախանալու առանձնապես մեծ առիթ չկար, քանզի արևմտահայության հոգևոր, հասարակական, կրթական, լուսավորչական և մշակութային կյանքը կանոնակարգող այդ փաստաթուղթը բառի բուն իմաստով սահմանադրություն չէր: Բելգիացի իրավագետ Մ. Ռոլեն Ժեկմենի կարծիքով եվրոպական սահմանադրությունների օրինակով կազմված այդ փաստաթուղթն ուներ սահմանադրությանը համապատասխանող կառուցվածք, բայց բովանդակային առումով ճիշտ կլիներ անվանել պարզապես «Կանոնադրություն հայ համայնքի», որի նպատակն էր կազմել կիսով չափ աշխարհական և կիսով չափ կրոնական մի հասարակություն» (Ролен-Жекмен, 1896, 18-19):

Հայ իրականության մեջ այդ փաստաթղթին ժամանակին տարբեր գնահատականներ են տրվել: Ատոմը (Հարություն Շահրիկյան) սահմանադրությունը համարում է «Ազգային օրենք կամ կանոնադրութիւն», «Հայոց Պատրիարքարանի, առ առաւելն Թուրքիոյ հայ ազգի կանոնադրութիւն», «ներքին ինքնաւարութեան օրենք» (Ատոմ, 1914, Ա, 7, 8): Առաքել Սարուխանը, որը սահմանադրությանը նվիրված իր ուսումնասիրությունը անթերի չէր գնահատում «մանավանդ պաշտոնական շրջանների կամ գաղտնի կազմակերպությունների գործունեության վերաբերյալ» տեղեկություններ չունենալու պատճառով, այն համարում էր «որչափ ազգային, նոյնչափ եւ օսմանեան պետական օրէնք» (Սարուխան, 1912, Բ, Դ): Արշակ Ալպոյաճյանը սահմանադությունը որակում է «ազգային կանոնադրութիւն» (Ալպոյաճեան, 1910, 331): Արևմտահայ մասոնության գիտակ Ռուբեն Բերբերյանի[2] բնութագրմամբ «Սահմանադրութիւն» բառը մի մեծ թիւրիմացութիւն է, այն, ինչ որ այդ անունով էր կոչւում, ի վերջոյ՝ ազգային-եկեղեցական գործերի կանոնադրութիւն էր» (Բերբերեան, 03.1937, թիվ 5, 79): «Հայաստան» օթյակի գերիարգելի վարպետ Արմենակ Ֆեներճյանն այդ փաստաթղթի մասին խոսելիս նախընտրում է գործածել մասոն Նահապետ

[2] Ռուբեն Բերբերյանը ֆրանսիական մի քանի օթյակների անդամ էր, բարձրապատիվ մասոն (Берберова, 1986, 1991, 113):

Ռուսինյանի շնորհած «ազգային սահմանադրություն» անվանումը (Ֆէնէրճեան, «Հայրենիք», 10.1954, թիվ 10, 93, 94; 06.1955, թիվ 6, 90; 07.1955, թիվ 7, 96)։

Արևմտահայերի ազգային սահմանադրությունը չէր համապատասխանում այդ բառի քաղաքական բովանդակությանը, ասել է թե՝ ժողովրդի, երկրի, ազգի հիմնական օրենքը: Արևմտահայերենում կանոնադրություն բառը բացատրվում է «սահմանադրութիւն, օրէնք, կանոն» (Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան, 1979, 1051): Դրանք «հոմանիշներ են, որոնք չեն տարբերակվում քաղաքական կամ իրավական տեսակետից» (Խառատյան, 2010, 372): Այնպես որ ազգային սահմանադրությունը արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող կանոնադրություն էր: Այն հայկական տարբերակում կոչվում էր «Ազգային սահմանադրություն հայոց», իսկ թուրքերեն տարբերակում՝ «Նիզամնամեի միլլեթի էրմենիյան», այսինքն՝ «Հայ ազգի կանոնադրություն» և ոչ թե «կանունու էսասի», ասել է թե՝ սահմանադրություն: Հայկական տարբերակում ասվում էր «Ազգային երեսփոխան», իսկ թուրքերեն տարբերակում՝ ոչ թե դրան համապատասխան «մեբուս», այլ՝ «միլլեթ վեքիլի» (ազգի փոխանորդ), կամ «մեջլիսի ումումի ազասը» (ընդհանուր ժողովի անդամ):

Այս սահմանադրության հիման վրա 1860 թ. օգոստոսի 25-ին առաջին անգամ գումարվեց Ազգային ընդհանուր ժողով, որին մասնակցում էին 120 ընտրված երեսփոխան և 60 անդամակից (Ատենագրութիւնք Ազգային ժողովոց 1860-1870, 1890): Ընդհանուր ժողովի ատենապետ ընտրվեց սահմանադրական շարժման հիմնադիրներից բժիշկ Սերովբե Վիչենյանը, իսկ ատենապետ՝ հրապարակախոս, խմբագիր Մկրտիչ Աղաթոնը: Շուտով նա ընտրվեց Քաղաքական ժողովի անդամ, իսկ նրա փոխարեն ատենադպիր ընտրվեց «Մասիս» թերթի խմբագիր Կարապետ Յութուճյանը: Առաջին Քաղաքական ժողովի անդամներ ընտրվեցին սահմանադրական շարժման հայտնի գործիչներ Գևորգ Երամյանը, Ալթուն-Տյուրին, Հակոբիկ Նորատունկյանը, Հովհաննես Տատյանը, Մինաս Մինասյանը, Գրիգոր Մարկոսյանը, Սահակ Ապրոյանը, Մկրտիչ Աղաթոնը: Քաղաքական ժողովի առաջին ատենապետ ընտրվեց Գրիգոր Մարկոսյանը, իսկ ատենադպիր՝ Մկրտիչ Աղաթոնը (Սարուխան, 1912, 21-22; Ալպոյաճեան, 1910, 431):

Ազգային սահմանադրությունից թեպետ ոգևորությունը մեծ էր, բայց շուտով պարզվեց, որ լուրջ խոչընդոտներ կան առանձին հարցեր կարգավորելու համար: 1860 թ. սահմանադրությունը պատրիարքին իրավունք էր տալիս պահանջելու ազգային ժողովների ու խորհուրդների լուծարումը, եթե նրանց գործունեությունը հակասում էր սահմանադրությանը, վիճարկել ազգային ժողովների որոշումները: Այդ պատճառով Ատոմն ու Ա. Ալպոյաճյանը սուլթանի շնորհած փաստաթուղթը համարում էին ոչ թե ազգային սահմանադրություն, այլ պատրիարքարանի կանոնադրություն (Ատոմ, 1914, 7, Ալպոյաճեան 1910, 406):

1861 թ. սկզբին սահմանադրական բարդություն առաջացավ, երբ Երուսաղեմի պատրիարքի ընտրության հարցում ծավալվեց, այսպես կոչված, «ներսեն-դուրսեն» պայքար: «Դրսենական» սահմանադրության կողմնակիցների ու «ներսենական» հակասահմանադրական հոգևորականների միջև հակամարտությունը դուրս եկավ այդ շրջանակներից և դարձավ սահմանադրության լինել-չլինելու շուրջ մղվող պայքար («Արշալույս Արարատյան», 09.1861, թիվ 657, 658; 10.1961, թիվ 659): Դա ընդգծում է «Մեղուն», ըստ որի՝ «այսօր ամէն ողջամիտ հայ կտեսնէ թե Երուսաղեմի պատրիարքը մեջէն

ըլլա, դուրսէն ըլլա կռիւներուն ներքին նպատակը Սահմանադրութեան կործանումն է» («Մեղու», 26.07.1861, «Հավելվածը»):

1861 թ. հուլիսի 21-ին Կ. Պոլսի խառը ժողովում սահմանադրականների և հակասահմանադրականների միջև բախում տեղի ունեցավ, որն ուղեկցվեց ժողովրդի հուզումներով («Փարիզ», 1861, թիվ 54; Երիցեան, «Փորձ», 1876, թիվ 3, 155): Հուլիսի 26-ին Սարգիս պատրիարք Գոյումճյանի հրավիրած ժողովը ընդունեց «խավարյալներին» սատարող որոշում, իսկ օգոստոսի 5-ին սահմանադրականների ժողովը պատրիարքին մեղադրեց հակասահմանադրական քայլեր անելու մեջ: 1861 թ. օգոստոսի 21-ին Կ. Պոլսի բնակչությունը կրկին ըմբոստացավ: Մեծ եպարքոս Ալի փաշան, օգտվելով այն հանգամանքից, որ սահմանադրությունը կառավարության կողմից վավերացված չէ, պահանջեց դադարեցնել դրա գործադրությունը («Մասիս», 1861, թիվ 506): 1861 թ. հոկտեմբերի 17-ին՝ Սարգիս պատրիարքի հրաժարականից հետո, ազգային ժողովն ու վարչությունը լուծարվեցին:

1863 թ. Սահմանադրությունը: 1860 թ. սահմանադրության հռչակումը պոլսահայությունն ուրախությամբ ընդունեց՝ հույս ունենալով «վայելել ազատութեան պտուղները» («Հայրենիք», 06.1955, թիվ 6, 90, 92) և դրանով «զօրաւոր ազգերի շարքին դասվել» (Չիլինկիրեան, 1883, 56): Բայց շուտով ակնհայտ դարձավ, որ սահմանադրությունը նրանց կյանքի, գույքի, ազատության և քաղաքական իրավունքների ակնկալվող երաշխավորը չէ: Դրա վկայությունը 1862 թ. Զեյթունի ապստամբության եղերական հետևանքներն էին: Սահմանադրությամբ հայ համայնքի ձևավորած կրոնական, քաղաքական, գործադիր և այլ ժողովների գործունեությունը հիասթափություն առաջ բերեց առաջադեմ մտավորականության շրջանում, մինչդեռ պոլսահայության մեծ մասը հայ համայնքի կանոնադրությունից «քաղաքական սահմանադրության բովանդակություն» էր ակնկալում, որը «իբր թե կոչուած էր երաշխավորելու հայի քաղաքացիական ազատութիւնները» («Հայրենիք», 03.1937, թիվ 5, 79):

Սահմանադրական հույսերի չիրականացման հետևանքով Կ. Պոլսում առաջ եկած հեղձուցիչ մթնոլորտը, հանրային բարքերի անկումը, կաթոլիկ և ուղղափառ համայնքների կրոնական չհաղթահարվող տարաձայնությունները, կռիվներն ու երկպառակտումները 1860-ական թթ. սկզբին հանգեցրին փոքրաթիվ հայ մասոնության ակտիվացմանը: Եվրոպական մասոնական օթյակներին անդամագրված սահմանադրական գործիչները մինչ հայկական օթյակ հիմնելը ստեղծեցին մասոնական գաղափարախոսություն կրող մի շարք հասարակական կազմակերպություններ ու միություններ: 1861 թ. սեպտեմբերի 1-ին Կ. Պոլսում «Համազգեաց ընկերության» 8 անդամներ հիմնեցին «Բարեգործական ընկերություն հայոց» կազմակերպություն: Ընկերության հիմնադիրների ու անդամների մեծ մասը կաթոլիկ հայեր, մասոններ և սահմանադրական շարժման ակտիվ գործիչներ էին: Ընկերության ատենապետ ընտրվեց Գրիգոր Աղաթոնը, ատենապետի փոխանորդ՝ Գրիգոր Օտյանը, ատենադպիր՝ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, ատենադպիրի փոխանորդ՝ Տիգրան Յուսուֆյանը: Ընկերության կանոնադրությունը, ծրագիրը, հրատարակած «Հայտարարությունը» կազմված էին մասոնական գաղափարախոսության ոգով, և դրանցում ընդգծվում էր եվրոպական «քաղաքակրթութիւնը իրեն առաջնորդ բռնելու» պարտավորությունը, «հին կարգն ու կանոնները տակն ու վրայ ընելը և անոնց վրայ

հիմնեալ ընկերական շենքը» (Յայտարարութիւն Բարեգործական Ընկերութեան Հայոց, 1861, 15-16):

1860 թ. նոյեմբերին «Բարեգործականի» անդամներ Հարություն Սվաճյանի և Սերովբե Թագվորյանի երաշխավորությամբ ընկերությանն անդամակցեց օրեր առաջ Կ. Պոլիս եկած Միքայել Նալբանդյանը ու նրանց միջոցով ծանոթացավ մասոնությանը (Մովսիսյան, 2018, 337-384): Շուտով նրանք ստեղծեցին նաև «Երիտասարդ միություն» գաղտնի ընկերություն, որի գործունեության մասին տեղեկություններ չեն պահպանվել (Մինաս Չերազ, 1927, 72):

«Բարեգործականի» անդամ սահմանադրական գործիչները երբևէ ընկերության անվանմանը համահունչ գործունեություն չծավալեցին, այլ նախապատրաստական աշխատանք տարան պոլսահայությանը մասոնության գաղափարախոսությունը հասանելի դարձնելու ուղղությամբ: Նրանք քաղաքացիական քաջություն ունեցան եվրոպացի ազատ որմնադիրների օրինակով համախմբվելու մասոնական օթյակներում, որպեսզի հաղթահարեն հայ համայնքների գործունեությունում թուրքական իշխանությունների հարուցած խոչընդոտներն ու արգելքները:

1861 թ. նոյեմբերի 9-ին Կ. Պոլսում Անգլիայի դեսպան, բարձրաստիճան մասոն Հենրի Բուլվեր Լիթթոնի[3] նախաձեռնությամբ և «Բարեգործականի» հիմնադիրներից Սերովբե Ազնավուրի անմիջական ջանքերով հիմնվեց անգլախոս օթյակ: Այն, ի պատիվ մեծ հանրաճանաչություն և հեղինակություն վայելող դեսպանի, կոչվեց «Բուլվեր» թիվ 894 օթյակ («Կեանք և արուեստ», 10.1936, թիվ 8, 229; Պէյլէրեան, 2001, 154): Անգլիայի դեսպանի խորհրդով 1862 թ. հունվարի 25-ին Սերովբե Ազնավուրն ու Սերովբե Թագվորյանը Կ. Պոլսում հիմնեցին «Հայկ» կամ «Օրիոն» անվանումով հայկական եղբայրական միություն, որը մասոնության գաղափարակիր Մանչեստրի «Odd Fellows» գաղտնի ընկերության մասնաճյուղ էր («Մասիս», 27.01.1862):

1862թ. հոկտեմբերի 25-ին Կ. Պոլսում հիմնվեց «Արևելքի միություն» ֆրանսախոս օթյակը, որին անդամագրվեցին Սերովբե Ազնավուրը, թատերական գործիչ Սրապիոն Հեքիմյանը, Օսմանյան կայսության թարգմաններ Թորոս բեյ Գիսակը, Հովսեփ Վարդանյանը, կրթության նախարարության պաշտոնյա Հարություն Սարաֆյանը, Պետական խորհրդի անդամ Հովհաննես Նուրյանը, ֆինանսների նախարարության պաշտոնյա Տիրան Ալիքսանյանը, բանկիր Մկրտիչ Փիշմիշյանը, դիվանագետներ Էլիաս Չայանը, Հարություն Տատյանը, ճարտարագետ Ներսես բեյ Տատյանը, փաստաբան Ավետիս Քոլոյյանը, թարգմանիչ Հաբեթիկ Նեվրուզյանը: Այս օթյակի անդամ դարձան նաև «Մասիս» թերթի խմբագիր Կարապետ Յութուճյանը, ճանաչված բժիշկներ և հասարակական գործիչներ Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Մոզյանը, Ստեփան Ասլանյանը, Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց), Բարունակ բեյ Ֆերուհխան Քրթիկյանը, Միքայել Խորասանճյանը, Տիգրան Փեշտիմալճյանը, Անդրանիկ Կրճիկյանը, Հայկ Պարոնիկ Մաթևոսյանը, դիվանագետ Հարություն Տատյանը, Կարապետ Սարաճօղլուն («Կեանք և արուեստ»,

[3] Հենրի Բուլվեր Լիթթոնը անգլիական «Հերթֆորդ» օթյակի անդամ էր: 1859 թ. մայիսին Կ. Պոլսում անդամագրվել էր «Արևելյան» օթյակին, հիմնադրել «Գերմանական միություն», «Հաղթանակ» օթյակները: 1862 թ. նա Թուրքիայում «Անգլիայի մեծ օթյակի» գավառային առաջին Մեծ վարպետն էր (Sommerk, 2015; Konitz Stanly, 1936; Mitchel, 2003):

10.1936, թիվ 8, 226; «Հայրենիք», 06.1955, թիվ 6, 91-9; Պէյլէրեան, 2001, 158, 166, 175, Jamgocyan, 2017, 80-84):

Մասոնությանն անդամագրված այս մտավորականները, որոնց մեծ մասը սահմանադրական շարժման գործիչներ էին, ձեռնամուխ եղան սահմանադրության վերափոխմանը: Այդ նպատակով Բարձր դուռը ստեղծեց 4 հոգևորականներից և 8 աշխարհիկ մարդուց բաղկացած հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Սերվիչենը, Գ. Աղաթոնը, Հ. Նորատունկյանը և ուրիշներ: 1862 թ. փետրվարին հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքը, խմբագրեց և փոփոխություններ մտցրեց սահմանադրության տեքստում: Սակայն Բարձր դռան հրահանգով ընդհանուր ժողովը ստեղծեց սահմանադրությունը վերաքննելու նոր հանձնաժողով, որին անդամակցում էին Սերվիչենը, Ս. Ասլանյանը, Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը Մ. Աղաթոնը, Մ. Մինասյանը, Հ. Սուրենյանը և ուրիշներ:

Երկու հանձնաժողովների համատեղ կազմած նոր տեքստը 1862 թ. ապրիլին ներկայացվեց Բարձր դռան հաստատմանը (Սարուխան, 1912, 24): 1862 թ. օգոստոսի 1-ին Կ. Պոլսի սահմանադրականների պատվիրակությունը խառը հանձնաժողովից պահանջեց ներկայանալ Բարձր դուռ և հորդորել վերսկսել սահմանադրության հաստատումը: Հանձնաժողովի ատենապետ Բարունակ Ֆերուհխանը փորձեց հանգստացնել ժողովրդին, բայց արդյունքի չհասավ: Մինչև օգոստոսի 9-ը Կ. Պոլսում շարունակվեցին փողոցային ընդհարումները սահմանադրականների և հակասահմանադրականների խմբավորումների միջև, մինչև որ ոստիկանությունը վերականգնեց կարգուկանոնը և ժամանակավոր Խառը հանձնաժողովի իրավասությունները («Մեղու», 01.08.1862, 169-172):

Թուրքական կառավարությունը 7 ամիս շարունակ ուսումնասիրում էր սահմանադրության նոր տեքստը, որի հաստատումը շարունակ ձգձգում էր: Գործին միջամտեց Կ. Պոլսում Անգլիայի դեսպան մասոն Հ. Բուլվեր Լիթթոնը: Նրա միջնորդությամբ Բարձր դուռը միայն 1863 թ. մարտի 17-ին՝ բազմաթիվ փոփոխություններից հետո, պատրիարքարանին վերադարձրեց սահմանադրության սրբագրված ու վավերացրած տեքստը՝ պատրիարքի տեղապահ Ստեփանոս եպիսկոպոս Մաղաքյանին պատգամելով «պարունակած նիւթերուն այսուհետև անթերի գործադրութեանը հսկել» (Ալպոյաճեան, 1910, 403): Սահմանադրությունը դժկամությամբ հաստատած սուլթան Աբդուլ Համիդը հայտարարեց. «Ալի փաշայեն էն յիմարական գործը եղած է այդ սահմանադրութիւնը» («Նոր կեանք», 1899, թիվ 1, 5): Սահմանադրությունը վավերացնելու հարցում մտավախություն չուներ մեծ եպարքոս Ալի Ֆուադ փաշան, որն այդ հարցը քննարկելիս հայտարարեց. «Հայք ի՞նչ են ուզում, իրանց սահմանադրութի՞ւնը, շատ բարի, տուէք իրանց ուզածը և մի վախիք նորա գործադրութեան մասին, վասնզի հայոց սահմանադրութիւնը քառանկյունի անիվներով մի սայլ է, որը շատ գնալ չի կարող» («Փորձ», 1876, թիվ 3, 174):

Դա չէր ընկալում պոլսահայությունը, որը սահմանադրության հաստատումը Հունքեար Իսկելեսի դաշտում հանդիսավորությամբ նշեց որպես տոն: Նրանք ազգային երգեր երգեցին, հայրենասիրական ճառեր կարդացին և «կեցցէներով Բոսֆորի օդը թնդացրին»: Հանդիսության մասնակիցներին ազգային դրոշը ձեռքներին մի խումբ իտալացի երիտասարդների ուղեկցությամբ շնորհավորեց Իտալիայի դեսպան Բելլա Գարաչչիոլան («Փորձ», 1876, թիվ 3, 177):

1860 թ. մայիսի 24-ի և 1863 թ. մարտի 17-ի սահմանադրությունների միջև կային զգալի տարբերություններ: Դրանք ակնհայտ էին նաև 1863 թ. սահմանադրության հայերեն և թուրքերեն տեքստերի միջև, որոնք արտացոլում էին պոլսահայ ազատամիտ մտավորականության և Բարձր դռան մոտեցումների տարբերությունները ազգային համայնքների կարգավիճակի վերաբերյալ: Հայերեն բնագրում «Ազգային ժողով», «Քաղաքական ժողով», երեսփոխան եզրույթները, որոնք սահմանադրական իմաստ ունեն, թուրքերեն բնագրում համարժեք չէին թարգմանված, որը պետության պաշտոնական դիրքորոշումն էր: 1863 թ. թուրքերեն բնագրից հանվեցին 1860 թ. սահմանադրությունում տեղ գտած հիմնական վեց սկզբունքները և ազգային նշանակություն ունեցող ութ հոդվածները, որոնք կարևորություն ունեին օրինականության տեսանկյունից: Բարձր դուռը մտածված գնաց այդ քայլին՝ արևմտահայերի կազմած սահմանադրությանը կանոնադրության բնույթ տալու նպատակով և որպես այդպիսին ընդունելու իրողությունից ելնելով:

Նոր սահմանադրությունը նախորդի համեմատ զգալիորեն կրճատվեց. 150 հոդվածից մնաց ընդամենը 99 հոդված: 1863 թ. սահմանադրությունը «աւելի ամփոփ էր և աւելի գործնական կարգադրութիւններ էր բովանդակում» (Սարուխան, 1912, 25), քան 1860 թ. սահմանադրությունը, որից էական դրույթներ և կանոնադրական շատ մանրամասնություններ հանվեցին: 1863 թ. սահմանադրությունից դուրս մնացին նախորդ տեքստի՝ ազգային վարչության կազմության մասին այն հոդվածները, որոնք վերաբերում էին վարչության երեսփոխանական բնույթին, գավառահայության տեղական վարչության փոխադարձ իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև ամբողջ ազգի, Էջմիածնի Մայր աթոռի հետ ունեցած հարաբերություններին (Ալպոյաճեան, 1910, 406): Սահմանադրությունները Ազգային ժողովում Կ.Պոլիսը և գավառները համամասնորեն չէին ներկայացնում: 1860թ. սահմանադրությամբ հայ համայնքն ընտրելու էր 220 երեսփոխան, որից 160-ը՝ Կ. Պոլսի 200-հազարանոց համայնքը, իսկ 60-ը՝ երկումիլիոնանոց գավառները (Ազգային սահմանադրութիւն հայոց, 1860, 10), մինչդեռ 1863 թ. սահմանադրությամբ Կ. Պոլիսն ընտրելու էր 100, իսկ գավառները՝ 40 երեսփոխան (Ազգային սահմանադրութիւն հայոց, 1860, 39): Ստացվում է, որ սահմանադրությունները կազմված էին Կ. Պոլսի ու արվարձանների համար և առանձին «միայն չորրորդ գլուխը՝ գաւառի համար» (Ատոմ, 1914, 66):

1860 թ. սահմանադրության համաձայն՝ ազգային ժողովը գումարվում էր կանոնավոր, ամեն տարի մարտին, իսկ արտահերթ ժողով կարելի էր հրավիրել ընդհանուր ժողովի որոշմամբ: 1863 թ. սահմանադրությամբ ազգային ժողովը հրավիրվում էր երկու տարին մեկ անգամ, որը պետք է աշխատեր երկու ամիս: Արտահերթ ժողով հրավիրելու համար անհրաժեշտ էր նախօրոք այդ մասին տեղեկացնել Բարձր դռանը և միայն թույլտվության դեպքում ժողովը բացել (Ազգային սահմանադրութիւն հայոց, 1863, 40-41):

1863 թ. սահմանադրությամբ նվազեցված էր եկեղեցու, Կ. Պոլսի պատրիարքի և հոգևորականության դերը ազգային ժողովում: Պատրիարքը թեպետ ազգային ժողովների նախագահն էր և վարում էր դրանց գործադիր իշխանությունը, բայց առաջին հոդվածում ասվում էր, որ նա «տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է» (Ազգային սահմանադրութիւն հայոց, 1863, 13): Նորություն էին Երուսաղեմի պատրիարքի

կարգավիճակի, ազգային վարչության հետ նրա փոխհարաբերությունների կանոնակարգումն ու պատրիարքի «ներսէն» ընտրակարգը: Ընդհանուր առմամբ 1863 թ. սահմանադրությունը իր ազգային արժեքով և ազատականությամբ զիջում էր 1860 թ. սահմանադրությանը, որն ավելի կատարյալ ու տրամաբանական կանոնակարգված փաստաթուղթ էր: 1863 թ. սահմանադրությունը ընդլայնում էր օսմանյան իշխանություններից հայ համայնքի կախվածության աստիճանը՝ խորացնելով ենթարկվածության իրավական հիմքերը: Այն շատ թույլ հնարավորություններ էր տալիս ազգային ինքնորոշման տրամադրություններին, նվազեցնում էր նրանց ինքնավարության աստիճանը, որը մասամբ առկա էր 1860 թ. սահմանադրությունում:

Պոլսահայ ամիրաներն ու նրանց հետ բազմաթիվ կապերով սերտաճած բարձրաստիճան հոգևորականությունը դեմ էին սահմանադրության ընդունմանը, որը սահմանափակելու էր իրենց իրավունքները: Դրա դեմ հետևողականորեն հանդես էին գալիս նաև ծայրահեղ պահպանողական հրապարակախոսներ Հովհաննես Չամուռյան Տերոյենցի «Երևակ», Եղիա Տեյիրմենճյանի «Արևելյան դար» թերթերը: «Երևակը» նույնիսկ հուշում էր թուրքական իշխանություններին, որ սահմանադրություն ընդունել նշանակում է «հպատակ ազգի մը կառավարութեան արտոնութիւն մը շնորհուիլը, որովհետև մի և նոյն տէրութան մեջ երկու կերպ կառավարութիւն ընդունիլ» («Երևակ», 01.07.1861, 14): Գավառահայության շահերի պաշտպան, «երկրի վիճակին լավատեղյակ» (Թոփչեան, 1909, 236), թուրքական իշխանությունների շրջանում «տաքգլուխ» հայի համբավ ունեցող Մկրտիչ Խրիմյանը 1860 թ. սահմանադրության դեմ հանդես եկողների մասին գրում էր. «Սահմանադրութիւն մերժող դասը ավելի հասկացողներն են, քան թե պարզամիտ հասարակութիւնը» («Արծվի Վասպուրական», 1861, թիվ 8, 228-229):

Սահմանադրական շարժման ծավալման գործում մեծ դեր խաղացին լիբերալ գործիչները, որոնք շարժման նախաձեռնողները, ղեկավարները, սահմանադրության տեքստի հեղինակներն ու դրա մի քանի տարբերակների խմբագիրներն էին: Արևմտահայ լուսավորյալ սահմանադրականները մտադիր էին Օսմանյան կայսրության կազմում ազգային ինքնավարություն ստեղծել, այնուհետև՝ անցնել խորհրդարանական հանրապետության: Այս գաղափարը նրանք ցանկանում էին իրականություն դարձնել ազգի լուսավորյալ գործիչների միջոցով, և այն սրբագրեցին 1860 թ. սահմանադրության ընդունումից հետո, երբ թուրքական իշխանությունները զենքի ուժով ճնշեցին 1862 թ. Զեյթունի ապստամբությունը, Վասպուրականի և Մուշի զինված ելույթները: Դրանից անհանգստացած սահմանադրականները նահանջեցին իրենց դիրքերից և համաձայնեցին ունենալ թեկուզ սահմանափակ իրավունքներով, բայց ազգային սահմանադրություն, որը կկարգավորեր հայ համայնքի գործունեությունը: Այդ պատճառով նրանք համաձայնեցին 1860 թ. սահմանադրության աղճատմանը: Ազգային սահմանադրական շարժման սկզբնական շրջանում 1860 թ. սահմանադրության հետ մեծ հույսեր էին կապում հայտնի հրապարակախոսներ, եվրոպական մասոնական օթյակների անդամներ Հ. Սվաճյանը, Գ. Չիլինկիրյանը, Կ. Փանոսյանը, Մ. Մամուրյանը և նրանց համախոհ հասարակական, քաղաքական գործիչները: «Խավարյալ» ամիրաների «լուսավորյալ» ժառանգներ Սերվիչենն ու Գրիգոր Օտյանը «մեծարում էին եկեղեցու հանգույցներով կաշկանդված Ազգային սահմանադրությունը…, երազում էին ազգային ոգու անկախությունը» (Հովհաննիսյան,

1955, 365): Բայց ինչպես իրավացիորեն նշում է սահմանադրական շարժման գործիչ, մասոն Հակոբ Վարդանյանը, «ուրիշ բան է Սահմանադրություն մը գրել և հաստատել, և ուրիշ բան է զանիկայ գործադրել» (Վարդանեան, 1863, 40):

1861-1863 թթ. սահմանադրական պայքարի նոր շրջափուլում արևմտահայ մասոնները հասկացան, որ սահմանադրության հեղինակները տեղի են տալիս ճնշումներին և առանց լուրջ պայքար մղելու հրաժարվում են իրենց գաղափարական համոզմունքներից: Սահմանադրության վերաբերյալ նրանց դիրքորոշման մեջ կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ հատկապես 1863 թ. սահմանադրության հաստատումից հետո: Նրանք հասկացան, որ Միքայել Նալբանդյանի բնութագրմամբ 15 տարվա պայքարի արդյունքում ձեռք բերված սահմանադրությունը, որը սուլթանի հաստատումից հետո դարձավ սոսկ «թլպատված» և մասնակիորեն «խեղացած» (Նալբանդյան, 1983, 292) փաստաթուղթ, չի արդարացնում իրենց սպասումներն ու ակնկալությունները:

Ստեփան Ոսկանյանի կարծիքով սահմանադրության ընդունմամբ «տակավին ըղձալի օրը չծագեցավ, և իր անունը միայն հստած թերթի մը վրայ կտեսնուի» (Հովհաննիսյան, 1955, 389):

Նախկինում 1860 թ. սահմանադրությամբ ոգևորված մասոն Հ. Սվաճյանը դարձավ 1863 թ. սահմանադրության լուրջ քննադատողներից մեկը: Նա «Մեղու» թերթի հրապարակումներում, «Մատնություն» գրքույկում, տարածած թռուցիկներում և որպես երեսփոխան Ազգային ժողովում սկսեց անողոք քննադատել ոչ միայն պահպանողականներին, լիբերալներին ու ամիրաներին, այլև Ազգային ժողովի անգործության մատնված անդամներին: Խորապես հիասթափված կատարվածից՝ Հ. Սվաճյանը գրում էր, որ ժողովուրդը «երեսփոխան ընտրեց, անոնց տուաւ ազգը կառաւարելու իշխանութիւնը և մինչև հիմա ամենայն կերպով հնազանդեցաւ անորոշ: Սակայն ասոնք, ցավելով կ՝ըսենք մեծագույն մասով խաբեցին անոր վստահութիւնը և ի դերև հանեցին անոր գեղեցիկ յոյսերը» («Մեղու», 23.01.1865, 1):

Կարապետ Փանոսյանը, ընտրվելով Ազգային ժողովի երեսփոխան, շատ շուտ հիասթափվեց և հրաժարվեց մասնակցել ժողովի աշխատանքներին:

1863 թ. սահմանադրությունից մասոն Մ. Մամուրյանն այնքան հուսախաբված էր, որ ցավով գրում էր. «Երբ սահմանադրական հայ կը տեսնեմ, կհիշեմ այն մուրացկանը, որ հացը մեղրի գոց ամանի վրա կը քսեր և կը կածեր թէ մեղր է կերածը... անոր հոտով կը կշտանար» (Վրույր [Մ. Մամուրեան], 1872, 124):

Մասոն Գ. Չիլինկիրյանը նկատում է, որ Կ. Պոլսի հայությունը հուզված է տեղի ունեցածից, քանզի հույս ուներ թե դրանով կարող է «զօրաւոր ազգերի շարքին դասուել» (Չիլինկիրեան, 1883, 56): Նա ուշացումով, բայց և այնպես հասկացավ, որ «Սահմանադրութեան ազդեցութիւնը խիստ փանաքի եղաւ..., ամիրաներու քմածին կամքին հաջորդեց ամիրայական բեկորներու խոսքը և անզգա ժողովականներու թոթվումը» (Չիլինկիրեան, 1883, 58): Նա հասկանում էր, որ պոլսահայությունը սահմանադրական պատրանքների մեջ է, հստակորեն չի պատկերացնում վիճակի լրջությունն ու իրեն սպասվող հիասթափությունը:

Մասոն Հ. Վարդանյանի համոզմամբ արևմտահայությունը պատրաստ չէր սահմանադրության ընդունմանը, որի կապակցությամբ գրում է. «Հայ ազգին հիմակուան

վիճակը արդեոք յարմար էր Սահմանադրութեան: Եթե այս հարցումը ժամանակին ըլլար մեզի, պատասխանիս յայտնի էր. այսինքն թէ ոչ» (Վարդանեան, 1983, 39):

1863 թ. ազգային սահմանադրությունը, որն իրականում ազգային ներքին կյանքն ու պատրիարքարանի գործունեությունը կարգավորող կանոնադրություն էր, չարդարացրեց արևմտահայ սահմանադրական շարժման գործիչների ու մասոնների հույսերը: Ազգային սահմանադրության հիման վրա կազմավորված կրոնական և քաղաքական ժողովների «թմրեցուցիչ և յուսախաբութիւն ծնող գործունեութեանը» (Բերբերեան, **«**Հայրենիք», 03.1937, թիվ 5, 75) հակադրվելու, Կ. Պոլսի՝ հետսահմանադրական շրջանի բարոյական հեղձուցիչ մթնոլորտը հաղթահարելու, հայությանը գոտեպնդելու, նրա ազգային ոգուն նոր ուժ ու կորով հաղորդելու նպատակով արևմտահայ մասոնները ձեռնամուխ եղան հայկական օթյակների ստեղծմանը:

1862 թ. Ս. Ազնավուրի և Ս. Թագվորյանի ջանքերով Կ. Պոլսում հիմնվեց մասոնական բնույթ ունեցող անգլիական «Odd Fellows» եղբայրական ընկերության «Արամ» մասնաճյուղը («Կեանք և Արուեստ», 1935, 73; «Հայրենիք», 02.1955, թիվ 2, 79-81): 1864 թ. ապրիլի 27-ին Զմյուռնիայում Հ. Բուլվեր Լիթթոնի մտահաղացմամբ և Ս. Ազնավուրի նախաձեռնությամբ հիմնվեց «Տիգրան» թիվ 1014 առաջին հայկական օթյակը, որին անդամագրվեցին հայտնի հրապարակախոսներ, խմբագիրներ Մառթեոս Մամուրյանը, Գրիգոր Չիլինկիրյանը, Ղուկաս Պալդազարյանը, թարգմանիչ Մեսրոպ Նուպարյանը, դերասաններ Ստեփան Էքշյանը, Սարգիս Միրզա Վանանդեցին, տպարանատեր-հրատարակիչներ Հարություն, Կարապետ, Ստեփան Տետեյան եղբայրները, փաստաբան Հարություն Ահարոնյանը, բժիշկ Թյուրապյանը, գործարարներ Տիրան Էքիզյանը, Կարապետ Արապյանը, Սեպուհ Մաքսուտ բեյը, բազմաթիվ վաճառականներ և ուրիշներ («Կեանք և Արուեստ», 1935, 73; «Հայրենիք», 05.1937, թիվ 7, 132; 02.1955, թիվ 2, 81; Պեյլերեան, 2001, 161-164; Jamgocjan, 2017, 67):

1866 թ. փետրվարի 22-ին Կ. Պոլսում իտալական օթյակին պատկանող տանը Սերովբե Ազնավուրի անմիջական ջանքերով հիմնվեց «Սեր» հայկական օթյակը, որին անդամագրվեցին սահմանադրական շարժման անդամներ Միքայել Ալիշանը, Սրապիոն Հեքիմյանը, Սերովբե Թագվորյանը, Հարություն Սվաճյանը, Կարապետ Յութուճյանը, դերասան Ստեփան Էքշյանը, ճարտարապետ Ռոմանոս Սետեֆճյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, դիվանագետ Գաբրիել Նորատունկյանը, պետական պաշտոնյաներ Լևոն Փափազյանը, Արթին Ասլանյանը և շատ ուրիշներ («Կեանք և Արուեստ», 1935, 75; «Հայրենիք», 04.1937, թիվ 6, 127-129; Հայրենիք, 05.1937, թիվ 7, 122-130, «Հայրենիք», 1955, թիվ 7,95-98; Պեյլերեան, 2001, 166-168; Jamgocjan, 2017, 92-99):

Սահմանադրական շարժման գործիչները, համալրելով մասոնական օթյակների շարքերը, ձգտում էին հաղթահարել պոլսահայության բուն դրած կռիվները, տարաձայնությունները, երկպառակությունները և մեղմել հանրային հոռի բարքերը: Նրանք նպատակ էին հետապնդում հանրությանը ընկալելի դարձնելու ազգի օգտի ու ազգային միության գաղափարները, ամրապնդելու դրանք լայն խավերի շրջանում, հղկելու ազգային քարը, հարթեցնելու ու շաղախելու մասոնության «տիեզերական եղբայրության», « մարդկային համերաշխության զգացմունքներով»:

Եզրակացություն: Ազգային սահմանադրությունը մասնակի ընդհատումներով գործեց 1860 թ. մայիսի 24-ից մինչև 1869 թ. դեկտեմբերի 9-ը, այնուհետև՝ մինչև 1891թ. սեպտեմբերը, իսկ հաջորդ հինգ տարիներին՝ ընդհատումներով: 1896 թ. հուլիսից մինչև 1908 թ. հուլիսը սահմանադրությունը դադարեց գործելուց, իսկ երիտթուրքերի իշխանության տարիներին գործեց որպես ազգային կանոնադրություն, որը քաղաքական որևէ հիմք չուներ: 1915 թ.՝ հայոց եղեռնագործության տարում, սահմանադրությունը վերացվեց: 1923 թ. Լոզանի կոնֆերանսից հետո թուրքական իշխանությունները վերացրին ինչպես արևմտահայերի ազգային սահմանադրությունը, այնպես էլ հպատակ բոլոր ազգային փոքրամասնությունների կանոնադրությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազգային սահմանադրութիւն հայոց, (1860, 1963), Կ. Պոլիս:
2. **Ալպոյաճեան Ա. (1910),** Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը: Ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան հիվանդանոցի հայոց, Կ. Պոլիս:
3. **Ալպոյաճեան Ա. (1964),** Զմիւռնոյ տպարանները// «Պատմաբանասիրական հանդես», 1964, թիվ 2:
4. **Ալպոյաճեան Ա. (1927),** Մինաս Չերազ, Գահիրե:
5. **Աճառեան Հ. (2001),** Պատմութիւն հայոց նոր գրականութեան, Պէյրութ:
6. **Ասատուր Հ. (1879),** Սահմանադրութիւնն և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս:
7. **Ասատուր Հ. (2011),** Կոստանդնուպոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, Ստանպուլ:
8. Ատենագրութիւն Ազգային ժողովոյ (1865), Կ.Պոլիս:
9. Ատենագրութիւնք Ազգային ժողովոց 1860-1870 (1890), Կ. Պոլիս:
10. **Ատոմ (1914),** Ազգային սահմանադրութիւնը, գիծեր մեր մշակույթի պատմութենէն, Կ. Պոլիս:
11. **Աւետիքեան Գ., Միւրմելեան Խ., Աւգերեան Մ. (1979),** Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան:
12. «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա), 1846-1848, 1850, 1861:
13. «Արծվի Վասպուրական» (Վան, Վարագ), 1861:
14. «Արևմուտք» (Փարիզ), 1859:
15. **Բերբերեան Ռ.,** Հայ մասօնները եւ Սէր օթեակը Պոլսոյ մէջ// «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5:
16. «Երևակ» (Կ. Պոլիս), 1861:
17. **Թոփչեան Ե. (1909),** Երիտասարդ Թուրքիան և հայերը: Մասն առաջին, Թիֆլիս:
18. **Թումանեան Կ. (1906),** Պատմութիւն Արևելեան խնդրոյ, Լոնդոն:
19. **Խառատյան Ա. (2010),** Արևմտահայ սահմանադրական շարժումը: Արևմտահայերի ազգային սահմանադրությունը// Հայոց պատմություն, հ. 3, գիրք առաջին, Երևան:
20. « Ծաղիկ» (Զմյուռնիա), 1861-1862:
21. «Կեանք և Արուեստ» (Փարիզ), 1935, 1936
22. «Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), 1957:
23. «Հայրենիք» (Բոստոն), 1937, 1954-1955:
24. «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1902:
25. **Հովհաննիսյան Ա. (1955),** Նալբանդյանը և նրա ժամանակը, հ.1, Երևան, էջ 365:

26. «Մասիս» (Կ. Պոլիս), 1852, 1857, 1859-1862, թիվ 506:
27. «Մեղու» (Կ. Պոլիս), 1856, 1860-1862, 1865:
28. **Մինաս Չերազ (1929),** Կենսագրական միւսիոններ, Պարիս, էջ 71:
29. «Միություն» (Զմյուռնիա), 1860:
30. **Մովսիսյան Ֆ. (2018),** Միքայել Նալբանդյանի մասոն լինելու հարցի շուրջ: ՎՊՀ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձոր, էջ 337-384:
31. Յայտարարութիւն Բարեգործական Ընկերութեան Հայոց (1861), Կ.Պոլիս:
32. **Նալբանդյան. Մ. (1983),** Երկերի ժողովածու, հ. 4, Երևան:
33. «Նոր կեանք» (Լոնդոն), 1899:
34. **Չիլինկիրեան Գ. (1883),** Ուղևորութիւն ի Կոստանդնուպոլիս, Զմիւռնիա:
35. **Պալասանեան Ս. (1890),** Պատմութիւն հայոց, Կ.Պոլիս:
36. **Պէյլէրեան Ա. (2003),** Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն և Պոլսոյ հայկական Սէր օթեակը ԺԹ դարուն// «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԻԳ, Պէյրութ:
37. **Պէրպէրեան Ա. (1871),** Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս:
38. **Պօղոսեան հ. Եփրեմ վ. (1967**), Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւուններու, հ. Ա, Վիէննա:
39. **Սարուխան (1912),** Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում 1860-1910, Ա հատոր, Թիֆլիս, էջ 246:
40. **Վարդանեան Յ. (1863),** Սահմանադրական ճշմարտութիւններ ու անոնց պարտավորութիւնները, Կ. Պոլիս, էջ 40:
41. **Վրույր [Մ. Մամուրեան] (1872),** Հայկական նամականի, Զմյուռնիա, էջ 124:
42. **Փափազեան Ա. (1862),** Ազգային Պատմութիւն, Կ. Պոլիս, էջ 190:
43. **Փափազեան Ա. (2002),** Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915), Երևան, էջ 27-35:
44. «Փարիզ» (Վիեննա), 1861:
45. «Փորձ», 1876:
46. **Քեչեան Բ. (1888),** Պատմութիւն Ս. Փրկչի հաւանդանոցին Հայոց ի Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս, էջ 90:
47. **Քյոմուրճեան Ե. (1931),** Ստամպոլի պատմութիւն, Վիէննա, էջ 568:
48. **Օրմանեան Մ. (1961),** Ազգապատում, Գ հատոր, մասն Ա, Պէյրութ, էջ 3880:
49. **Ֆէնէրճեան Ա. (1954),** Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ// «Հայրենիք» (Բոստոն), հոկտեմբեր, թիվ 10:
50. **Ֆէնէրճեան Ա. (1935),** Ազատ որմնադրութիւնը Մօտավոր Արևելքի մէջ// «Կեանք և Արուեստ»:
51. **Ֆէնէրճեան Ա. (1936),** Ազատ որմնադրութիւնը Մօտավոր Արևելքի մէջ//«Կեանք և Արուեստ»:
52. **Берберова Н. (1991),** Люди и ложи: русские масоны XX столетия. Нью-Йорк, 1986, Москва.
53. **Вейл Ж. (1906),** История республиканской партии во Франции с 1814 по 1870 гг. Пер. с фр. Москва.
54. История XIX века (1938), Под ред. Лависса и Рамбо, т. 3, Москва.
55. **Миллер А. (1994),** Мустафа паша Байрактар. М-Л..
56. **Петросян Ю. (1971),** Младотурецкое движение, Москва.

57. **Пименова Л. (1992),** Идея свободы во французской революций XVIII века// «Новая и новейшая история». № 1, Москва.
58. **Ридли Дж. (2007),** Фримасоны. Люди, творящие мировую историю. Пер. с фр., Москва.
59. **Ролен-Жекмен М. (1986),** Армения, армяне и трактаты. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва,
60. **Рубинский Ю. (1976),** Масоны во Франции//«Вопросы истории». М., № 9.
61. **Сафрастян Р. (1985),** Доктрина османизма в политической жизни Османской империи, Ереван.
62. **Соловьев О. (1992),** Масонство далекое и близкое// «Новая и новейшая история». № 4, Москва.
63. **Тальмер М. (1906),** Масонство и революция во Франции. «Русский вестник», март, том 302, Москва.
64. **Черняк Е. (1981),** Западноевропейское масонство XVIII века. «Вопросы истории», М., 1981, № 12, Москва.
65. **Baylot J. (1968),** La voie substituée. Liege..
66. **Jamgocyan O. (2017),** Les Francs-Maçons Arméniens et La Constitution de l' Armenie ottomane Constantinople 1863, Paris.
67. **Mitchel G. (2003),** Bulwer Litton: The Rise and Fall of a Victorian Man of Letter. London, New York.
68. **Sommer D. (2015),** Freemasonry in the Ottoman Empire: A History of the Fraternity and its Influence in Syria and the Levant. I. B. Tauris, London, New York.

REFERENCES

1. Azgayin sahmanatrutʻiwn hayotsʻ, (1860, 1963), G. Polis:
2. **Albōyajjean A. (1910),** Azkayin sahmanatrutʻiwně, ir dzakumě ew girarutʻiwně: Əntardzag ōratsʻuytsʻ S. Pʻrgchʻjean hivantanotsʻi hayotsʻ, G. Polis:
3. **Albōyajjean A. (1964),** Zmiwrnoy dparannjerě// «Patmabanasirakan handjes», 1964, tʻiv 2:
4. **Albōyajjean A. (1927),** Minas Chʻjeraz, Kahirje:
5. **Acharjean H. (2001),** Padmutʻiwn hayotsʻ nor krakanutʻjean, Pēyrutʻ:
6. **Asadur H. (1879),** Sahmanatrutʻiwnn ew hay zhʼoghovurdě, G. Polis:
7. **Asadur H. (2011),** Gosdantnupolsoy hayjerě ew irjentsʻ padriarkʻnjerě, Sdanpul:
8. Adjenakrutʻiwn Azkayin zhʼoghovoy (1865), G.Polis:
9. Adjenakrutʻiwnkʻ Azkayin zhʼoghovotsʻ 1860-1870 (1890), G. Polis:
10. **Adom (1914),** Azkayin sahmanatrutʻiwně, kidzjer mjer mshaguytʻi patmutʻjenēn, G. Bolis:
11. **Awjetikʻjean K., Siwrmjeljean Kh., Awkjerjean M. (1979),** Nor parakirkʻ Haykazjean ljezui, h. A, JErewan:
12. «Arshaluys Araradyan» (Zmyurnia), 1846-1848, 1850, 1861:
13. «Ardzvi Vasburakan» (Van, Varak), 1861:
14. «Arewmudkʻ» (Pʻariz), 1859:
15. **Pjerpjerjean R.,** Hay masōnnjerě yw Sēr ōtʻjeakě Polsoy mēch// «Hayrjenikʻ», 1937, mard, tʻiv 5:
16. «JErewag» (G. Bolis), 1861:
17. **Tʻopʻchʻjean JE. (1909),** JEridasart Tʻurkʻian ew hayjerě: Masn arajin, Tʻi flis:
18. **Tʻumanjean G. (1906),** Padmutʻiwn Arewjeljean khntroy, Lonton:

19. **Kharatyan A. (2010),** Arewmtahay sahmanadrakan sharzh'umĕ: Arewmtahayjeri azgayin sahmanadrut'yunĕ// Hayots' patmut'yun, h. 3, girk' arajin, JErewan:
20. « Dzaghik» (Zmyurnia), 1861-1862:
21. «Gjeank' ew Arujest» (P'ariz), 1935, 1936
22. «Hayastani koch'nak» (Nyu York'), 1957:
23. «Hayrjenik'» (Boston), 1937, 1954-1955:
24. «Hantēs amsōrjeay» (Vijenna), 1902:
25. **Hovhannisyan A. (1955),** Nalbandyanĕ ew nra zh'amanakĕ, h.1, JErewan, ēj 365:
26. «Masis» (K. Polis), 1852, 1857, 1859-1862, t'iv 506:
27. «Mjeghu» (K. Polis), 1856, 1860-1862, 1865:
28. **Minas Ch'jeraz (1929),** Gjensakragan miwsionnjer, Paris, ēj 71:
29. «Miut'yun» (Zmyurnia), 1860:
30. **Movsisyan F. (2018),** Mik'ayjel Nalbandyani mason linjelu harts'i shurj: VPH mijazgayin gitazh'oghovi nyut'jeri zh'oghovatsu, Vanadzor, ēj 337-384:
31. Haydararut'iwn Barjegortsakan Ənkjerut'jean Hayots' (1861), K.Polis:
32. **Nalbandyan. M. (1983),** JErkjeri zh'oghovatsu, h. 4, JErewan:
33. «Nor kjeank'» (London), 1899:
34. **Ch'ilingirjean K. (1883),** Ugheworut'iwn i Gostantnupolis, Zmiwrnia:
35. **Palasanjean S. (1890),** Patmut'iwn hayots', G.Polis:
36. **Pēylērjean A. (2003),** Azad ormnatrut'jean mudk'ĕ Ōsmanjean kaysrut'iwn ew Polsoy haykakan Sēr ōt'jeakĕ ZH'T' tarun// «Haygazjean hayagidagan handjes», hador IG, Pēyrut':
37. **Pērpērjean A. (1871),** Padmut'iwn hayots', G. Polis:
38. **Pōghosjean h. JEp'rjem v. (1967**), Padmut'iwn hay mshakut'ayin ĕnkjerut'iwunnjeru, h. A, Viēnna:
39. **Sarukhan (1912),** Haykakan khntirn ew Azgayin sahmanadrut'iwnĕ T'urk'iayum 1860-1910, A hador, T'i flis, ēj 246:
40. **Vardanjean Y. (1863),** Sahmanadrakan jshmartut'iwnnjer u anonts' partavorut'iwnnjerĕ, K. Polis, ēj 40:
41. **Vruyr [M. Mamurjean] (1872),** Haygagan namakani, Zmyurnia, ēj 124:
42. **P'ap'azjean A. (1862),** Azkayin Batmut'iwn, G. Bolis, ēj 190:
43. **P'ap'azjean A. (2002),** T'urk'akan vavjeragrakan nyut'jer Ōsmanyan kaysrut'yan och' mahmjedakan zh'oghovurdnjeri masin (1839-1915), JErewan, ēj 27-35:
44. «P'ariz» (Vijenna), 1861:
45. «P'ordz», 1876:
46. **K'jech'jean P. (1888),** Padmut'iwn S. P'rgch'i hawantanots'in Hayots' i Gosdandnupolis, G. Polis, ēj 90:
47. **K'yomurjjean JE. (1931),** Stamboli batmut'iwn, Viēnna, ēj 568:
48. **Ōrmanjean M. (1961),** Azkabatum, G hator, masn A, Bēyrut', ēj 3880:
49. **Fēnērjjean A. (1954),** Azad ormnadrut'iwnĕ hayots' mēch// «Hayrjenik'» (Bosdon), hokdjembjer, t'iv 10:
50. **Fēnērjjean A. (1935),** Azad ormnatrut'iwnĕ Mōdavor Arewjelk'i mēch// «Gjeank' ew Arujesd»:
51. **Fēnērjjean A. (1936),** Azad ormnatrut'iwnĕ Mōdavor Arewjelk'i mēch//«Gjeank' ew Arujesd»:
52. **Bjepbjepova N. (1991),** Ljudi i lozhi: pucckije macony XX ctoljetija. N'ju-Йopk, 1986, Mockva.
53. **Vjeйl ZH. (1906),** Ictopija pjecpublikanckoй paptii vo Fpancii c 1814 po 1870 gg. Pjep. c fp. Mockva.

54. Ictopija XIX vjeka (1938), Pod pjed. Lavicca i Pambo, t. 3, Mockva.
55. **Milljep A. (1994),** Muctafa pasha Вайрактар. M-L..
56. **Pjetpocjan JU. (1971),** Mladotupjeckoje dvizhjenije, Mockva.
57. **Pimjenova L. (1992),** Idjeja cvobody vo fpancuzckoй pjevoljucій XVIII vjeka// «Novaja i novjeйshaja ictopija». № 1, Mockva.
58. **Pidli Dzh. (2007),** Fpimacony. Ljudi, tvopjash'ije mipovuju ictopiju. Pjep. c fp., Mockva.
59. **Poljen-ZHjekmjen M. (1986),** Apmjenija, apmjanje i tpaktaty. Polozhjenije apmjan v Tupcii do vmjeshatjel'ctva djepzhav v 1895 godu, Mockva,
60. **Pubinckій JU. (1976),** Macony vo Fpancii//«Voppocy ictopii». M., № 9.
61. **Cafpactjan P. (1985),** Doktpina ocmanizma v politichjeckoй zhizni Ocmanckoй impjepii, JEpjevan.
62. **Colov'jev O. (1992),** Maconctvo daljekoje i blizkoje// «Novaja i novjeйshaja ictopija». № 4, Mockva.
63. **Tal'mjep M. (1906),** Maconctvo i pjevoljucija vo Fpancii. «Pucckій vjectnik», mapt, tom 302, Mockva.
64. **CHjepnjak JE. (1981),** Zapadnojevpopjeйckoje maconctvo XVIII vjeka. «Voppocy ictopii», M., 1981, № 12, Mockva.
65. **Baylot J. (1968),** La voie substituée. Liege..
66. **Jamgocyan O. (2017),** Les Francs-Maçons Arméniens et La Constitution de l' Armenie ottomane Constantinople 1863, Paris.
67. **Mitchel G. (2003),** Bulwer Litton: The Rise and Fall of a Victorian Man of Letter. London, New York.
68. **Sommer D. (2015),** Freemasonry in the Ottoman Empire: A History of the Fraternity and its Influence in Syria and the Levant. I. B. Tauris, London, New York.

Ներկայացվել է՝ 31.03.2022	Received 31.03.2022	Получено: 31.03.2022
Գրախոսվել է՝ 06.06.2022	Reviewed 06.06.2022	Рассмотрено: 06.06.2022
Ընդունվել է՝ 25.08.2022	Accepted 25.08.2022	Принято: 25.08.2022

E-mail: history.vsu@gmail.com